Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

ԱՐԴԱՐԱՑՈՒՄԻՑ ԴԵՊԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ.

ՄԻՆՉՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՎ ՀԵՏՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԻՇԽՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՆԱԽԱՎԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՌԿԱ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ԷԴԳԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՈՒԼԻՍ 2018

Սույն հետազոտությունն իրականացվել է «Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան» - ի աջակցությամբ՝ Քաղաքականության կրթաթոշակներ ծրագրի շրջանակներում:

Սույն հետազոտություն արտահայտված մտքերը նրա հետազոտող Էդգար Վարդանյանի գաղափարներն են, որոնք չպետք է դիտարկվեն որպես «Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան»-ի տեսակետ:

Սույն հրապարակման որեւէ մաս չի կարող օգտագործվել առանց «Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան»-ի թույլտվության:

Բովանդակություն

Հեղինակի մասին 4
Կարճ բովանդակություն 5
Նախաբան 8
Հետազոտության մեթոդաբանությունը 9
Պատմության վերանայման միջազգային դիսկուրսը 10
Փորձագետների ձայնը 13
Հայ բոլշեվիկների արդարացումը և Հայաստանի սովետական շրջանի ռոմանտիզացումը որպես ավտորիտարիզմի դրսեվորում 19
Ձգուշավոր դատապարտում 24
Հին ու նոր վերնախավերի մոտեցումների միջեվ նմանությունները եվ տարբերությունները 36
ՎԵՐՋԱԲԱՆ 37
Առաջարկություններ 38

Հեղինակի մասին

Էդգար Վարդանյանը քաղաքագետ է, «Դետեկտոր» վերլուծական նախագծի գլխավոր խմբագիրն է: Էդգար Վարդանյանը հանդիսանում է Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի կրթաթոշակառու

Կարճ բովանդակություն

Խորհրդային անցյալի վերաբերյալ իշխող քաղաքական վերնախավում առկա մոտեցումները շատ առումներով կարող են ցույց տալ, թե ինչպիսի վերաբերմունք ունի պետությունը ավտորիտարիզմի, բռնության մշակույթի, մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների նկատմամբ եւ ինչպիսի սկզբունքների վրա է խարսխված երկրի քաղաքական ներկան: Հայաստանի խորհրդային անցյալի վերաբերյալ մինչհեղափոխական եւ հետհեղափոխական հայաստանյան իշխող քաղաքական վերնախավերի շրջանում տարածված մոտեցումների ուսումնասիրությունը կարող է օգնել հասկանալ, թե որտե՞ղ է Հայաստանը գտնվել երեկ եւ որտե՞ղ է այն այսօր:

Հետազոտության հիմնական խնդիրները

- բացահայտել մինչհեղափոխական իշխող քաղաքական վերնախավի կողմից հայ բոլշեվիկների համար դրական կերպար ստեղծելու քաղաքականության իրականացման մեխանիզմները, քարոզչական հնարքները եւ ներկայացվող հիմնավորումները
- պարզել սովետական անցյալի նկատմամբ մինչհեղափոխական եւ հետհեղափոխական իշխող քաղաքական վերնախավերում, ինչպես նաեւ պրոդեմոկրատական փորձագիտական շրջանակներում տարածում գտած մոտեցումները եւ վերջիններս համեմատելու միջոցով բացահայտել մոտեցումների տարբերությունները եւ նմանությունները

Հիմնական եզրակացությունները

- մինչհեղափոխական իշխող քաղաքական վերնախավը, թեեւ հռչակել էր իրեն որպես պահպանողական-ազգայնական, նժդեհյան գաղափարների ջատագով, իրականացնում էր հայ բոլշեվիկներին արդարացնելու, նրանց դրական կերպարի ձեւավորման ուղղությամբ ոչ ֆորմալ քաղաքականություն: Այդ քաղաքականությունն իր վառ արտահայտումն է գտել, օրինակ, «Ելք»-ի փողոցների անվանափոխության նախաձեռնության, սովետական շրջանում բռնադատվածներին նվիրված «Խավարում» անունը կրող ցուցահանդեսի դեմ

արտահայտված դիրքորոշման, ՁԼՄ-երի միջոցով դրանց դեմ իրականացվող քարոզչության մեջ:

- Մինչհեղափոխական իշխող քաղաքական վերնախավի ներկայացուցիչները Հայաստանի սովետական անցյալը փաստացի արդարացնող քարոզչություն իրականացնելիս իրենց դիրքորոշումները հիմնականում հիմնավորում էին՝ հայ ժողովրդի պատմության միասնականությունը ցույց տալու, պատմությունը սեւ եւ սպիտակի չբաժանելու, հայ բոլշեվիկների առանձին դրական գործողությունները արժեւորելու անհրաժեշտության նարատիվների միջոցով:
- Մինչհեղափոխական իշխող քաղաքական վերնախավի հիմնական քարոզչական հնարքներից էին՝ հակառակորդներին որպես սեփական պատմությունը սեւացնողների պիտակավորելը, քաղաքական դիվիդենտներ շահելու, սեփական պատմությանը չտիրապետելու, օտար պետություններին, քաղաքական ուժերին ծառայելու, նրանց շահերը սպասարկելու մեջ մեղադրանքները:
- Հայ բոլշեվիկներին եւ Հայաստանի սովետական անցյալը գովերքող քարոզչությունն իրականացրել են ինչպես մեդիա դաշտում հայտնի ՀՀԿ-ական գործիչները, այնպես էլ ՀՀԿ-ին մոտ գտնվող քաղաքական գործիչները, մտավորականները եւ լրագրողները: Հետազոտված լրատվամիջոցներից վերոնշյալ քարոզչություն իրականացնելուն ծառայող ամենաակտիվ հարթակներից էր «Արարատ» ՀԸ-ը:
- Պրոդեմոկրատական ակադեմիական շրջանակներy ներկայացնող մեր զրուցակիցների մոտ տարածված մոտեցում է ԽՍՀՄ-ը որպես տոտալիտար ռեժիմ ունեցող պետություն, սակայն, միաժամանակ, որպես մոդեռնիստական նախագիծ դիտարկելը: Շատերի համոզմամբ Հայաստանում սովետական կարգերը ուժով են հաստատվել, իսկ բոլշեվիկները Հայաստանում չունեին հանրային հենարան: Այս ամենի հետ մեկտեղ շատերն արդարացված են համարում Հայաստանի սովետական շրջանը որպես «երկրորդ հանրապետություն» դիտարկելը, թեեւ առկա է նաեւ հակառակ տեսակետ: Մեր զրուցակից գիտնականներից շատերը գտնում են, որ Հայաստանում սովետական կարգերի հաստատումը կարելի է դիտարկել որպես օկուպացիա:
- Ակադեմիական շրջանակները եւ հետհեղափոխական իշխող քաղաքական վերնախավը ներկայացնող մեր զրուցակիցների մոտեցումները սովետական անցյալի հետ կապված բազմաթիվ հարցերում էապես չեն տարբերվում միմյանցից:
- Հետհեղափոխական իշխող քաղաքական վերնախավը ներկայացնող մեր զրուցակիցներից բոլորը ԽՍՀՄ-ը դիտարկում են որպես հիմնականում

տոտալիտար ռեժիմ եւ համոզվածություն են հայտնում, որ բռնությունների, բռնաճնշումների մեջ այս կամ այն կերպով ներգրավված հայ բոլշեվիկները անկախ ամեն ինչից, անվերապահորեն արժանի են դատապարտման:

- Հետհեղափոխական իշխող քաղաքական վերնախավը ներկայացնող մեր զրուցակիցների մեծ մասը գտնում է, որ Սովետական Հայաստանը Հայաստանի ժողովրդի վրա ունեցել է ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Որպես դրական երեւույթներ, ամենից հաճախ, նշվել են ինդուստրիալիզացիան, գիտության եւ մշակույթի զարգացումը, որպես բացասական՝ կրավորական, հպատակային ավտորիտար քաղաքական մշակույթը, բռնության մշակույթը:
- Հետհեղափոխական իշխող քաղաքական վերնախավի ներկայացուցիչ մեր զրուցակիցների շրջանում տարածված մոտեցում է, որ պետք է գնահատական տրվի սովետական ռեժիմին, միեւնույն ժամանակ, դա առաջնահերթություն չի համարվում:
- Հետհեղափոխական իշխող քաղաքական վերնախավը ներկայացնող մեր զրուցակիցներից շատերը ընդունելի են համարում սովետական Հայաստանը որպես «երկրորդ հանրապետություն» կոչելը: Սակայն մեր բոլոր զրուցակիցները համոզված Էին, որ դասական իմաստով սովետական Հայաստանը հանրապետություն չէր, քանի որ անկախ չէր եւ իշխանությունը ժողովրդին չէր պատկանում:
- Հետհեղափոխական իշխող քաղաքական վերնախավը ներկայացնող մեր զրուցակիցները կողմ են ԽՍՀՄ բռնաճնշումներին նվիրված թանգարանի կառուցմանը եւ կողմ են Հայաստանի սովետական շրջանի պատմության վերանայմանը:
- Մինչհեղափոխական եւ հետհեղափոխական իշխող քաղաքական վերնախավերի շրջանում տարածված մոտեցումները սովետական անցյալի նկատմամբ էապես տարբերվում են միմյանցից եւ միայն խիստ սահմանափակ հարցերի շուրջ կան որոշակի նմանություններ:

Նախաբան

Սույն հետազոտությունն իրականացնելու առիթ էր հանդիսացել Սերժ Սարգսյանի գլխավորությամբ ՀՀԿ-ի կողմից երկրի կառավարման հատկապես վերջին շրջանում ի հայտ եկած հայ սովետական քաղաքական գործիչների հակահիրավական գործունեության փաստացի արդարացման, նրանց բացառապես դրական կերպարի ձեւավորման ուղղությամբ հայաստանյան իշխող քաղաքական վերնախավի կողմից դե ֆակտո իրականացվող քաղաքականությունը: Հասարակական, քաղաքական եւ մշակութային մի շարք հայաստանյան գործիչներ հաճախ խոսում էին պատմության վերանայման անթույլատրելիության մասին: Վերոնշյալ գործիչները նշում էին, որ չի կարելի դատապարտել խորհրդային շրջանի ազգությամբ հայ քաղաքական գործիչներին, քանի որ նրանք հայրենասեր պետական գործիչներ են եղել եւ բազմաթիվ դրական գործողություններ են կատարել հայերի եւ Հայաստանի համար:

Հետազոտությունը, որը նախաձեռնվել էր դեռ Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ) կողմից երկիրը կառավարելու շրջանում, կոչված էր պարզելու վերոնշյալ քաղաքականություն իրականացնելու եղանակները, մեխանիզմները, նպատակները եւ հիմնավորումները, որոնք օգտագործվում էին իշխող քաղաքական վերնախավի ներկայացուցիչների կողմից: Խնդիրը կարեւոր էր այն տեսակետից, որ սովետական գործիչների դրական կերպարի ձեւավորումը հանգեցնում էր ավտորիտար քաղաքական մշակույթի ամրապնդմանը, ծառայում էր մինչհեղափոխական շրջանի իշխող քաղաքական վերնախավի գործիչների հակահիրավական քաղաքականության յուրօրինակ արդարացմանը: Այս ամենը պահանջում էր քաղաքացիական հասարակության ակտիվացում՝ տոտալիտար անցյալը սպիտակեցնող (արդարացնող) քաղաքականության խորացումը թույլ չտալու համար: Այս առումով քաղաքացիական հասարակության գործունեության արդյունավետությանը նպաստող գործոններից մեկը կարող էր լինել խնդրի խորքային իմացությունը, ինչին պետք է եւ նպաստեր մեր հետազոտությունը:

Սակայն, «թավշյա հեղափոխություն» անվանումը ստացած շրջադարձային քաղաքական իրադարձությունները, որոնք տեղի ունեցան Հայաստանում, ի հայտ բերեցին իշխող քաղաքական նոր, առնվազն «տրանզիտային» վերնախավ, ինչն անհրաժեշտություն առաջացրեց վերանայել հետազոտությունը՝ այն ավելի արդիական դարձնելու նպատակով: Այս առումով նպատակահարմար գտնվեց պարզել սովետական անցյալի վերաբերյալ նաեւ այդ նոր քաղաքական վերնախավի շրջանում տարածված

մոտեցումները եւ որակական համեմատական վերլուծության միջոցով բացահայտել հին եւ նոր իշխող քաղաքական վերնախավերի շրջանում առկա մոտեցումների տարբերությունները եւ նմանությունները, ինչպես նաեւ այս ամենի հիման վրա ձեւավորել տրանզիտային շրջանի իշխող քաղաքական վերնախավին ուղղված առաջարկներ:

Հետազոտության մեթոդաբանությունը

Մինչհեղափոխական իշխող քաղաքական վերնախավերի մոտ առկա մոտեցումները պարզելու նպատակով *դիսկուրս վերլուծության* մեթոդի միջոցով հետազոտվել են իշխանությունների ներկայացուցիչների եւ նրանց քաղաքականությունը սատարողների ելույթները, կարծիքները, որոնք զետեղված են եղել հայաստանյան մամուլում: Կատարվել է «Հ1», «Շանթ», «Կենտրոն», «Արարատ» եւ «Արմենիա» հայաստանյան հեռուստաընկերությունների համացանցում տեղադրված քաղաքական-սոցիալական բնույթ ունեցող բոլոր հաղորդումների (բացի նորությունների թողարկումներից) վերլուծությունը: Ուսումնասիրվել են նաեւ հայաստանյան ինտերնետ հարթակների նույնատեսակ նյութերը՝ «Ազատություն» TV-ի քաղաքական թեմատիկայով հաղորդումները եւ «Մեդիա Կենտրոն»-ի ասուլիսները: Ուսումնասիրության են ենթարկվել նաեւ հայաստանյան թերթերից երկուսը՝ «Առավոտ» եւ «Գոլոս Արմենիի» թերթերը:

Ուսումնասիրվել են *2017թ. օգոստոսի 23-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը* ընկած ժամանակահատվածի նյութերը: Հետազոտության համար ընտրված ժամանակային հատվածը պայմանավորված է նրանով, որ հենց այդ ժամանակահատվածում էր, որ փողոցների անվանափոխության «ԵԼՔ»-ի նախաձեռնության եւ «Խավարում» սովետական շրջանի բռնաճնշումների խնդրին նվիրված ցուցահանդեսի հետ կապված ակտիվացել էին ԽՍՀՄ, հատկապես, ստալինյան ժամանակաշրջանում հայ քաղաքական գործիչների կողմից կատարված հանցագործությունների, հակահիրավական արարքների գնահատման հետ կապված քննարկումները: Նախնական դիտարկումները ցույց էին տվել, որ հենց այդ ժամանակահատվածում էր հայաստանյան իշխող քաղաքական վերնախավը առավել ակտիվ կերպով արտահայտվել ԽՍՀՄ-ի, սովետահայ քաղաքական գործիչների մասին, պատմության վերանայման թեմաների վերաբերյալ եւ այդ իսկ պատճառով այդ ժամանակահատվածի ՁԼՄ-երի հրապարակումների ուսումնասիրությունը բավարար է

խնդրո շուրջ նախկին իշխող քաղաքական վերնախավի շրջանում տարածված եւ հրապարակային արտահայտված հիմնական պատկերացումները պարզելու համար: Օգոստոսի 23-ը ընտրված էր նաեւ այն հանգամանքից ելնելով, որ այդ օրը Եվրոպայում նշվում է որպես ստալինիզմի եւ հիտլերիզմի զոհերի հիշատակի օր եւ հետաքրքրական էր, թե արդյոք վերջինս որեւէ կերպ հիշատակվել է ՁԼՄ-երում: Ի դեպ, մեր հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ այդ օրը հիշատակված չի եղել մեր կողմից հետազոտված մամուլում:

Տրանզիտային շրջանի իշխող քաղաքական վերնախավի մոտեցումները պարզելու նպատակով կիրառվել է *խորքային հարցազրույցների* մեթոդը: Իրականացվել են խորքային հարցազրույցներ տարբեր ոլորտներ ներկայացնող իշխող քաղաքական վերնախավի ներկայացուցիչների հետ:

Նաեւ խորքային հարցազրույցներ են իրականացվել պրոդեմոկրատական կողմնորոշում ունեցող եւ հանրային կյանքում ակտիվություն ցուցաբերող ակադեմիական շրջանակների ներկայացուցիչների հետ որպես քաղաքական վերնախավի վրա պոտենցիալ ազդեցություն ունեցող սուբյեկտների:

Պատմության վերանայման միջազգային դիսկուրսը

Հարկ է նշել, որ, ընդհանրապես, պատմության վերանայման (ռեվիզիայի) գաղափարը, որին դիմադրելու կոչ էին անում մինչթավշյահեղափոխական շրջանի հայաստանյան իշխող քաղաքական վերնախավի ներկայացուցիչները, հաստատապես ընկած է ժամանակակից պատմագիտության հիմքում: Ամերիկայի պատմական ասոցիացիայի նախկին ղեկավար Ջեյմս Մաքֆերսոնը նշում էր, որ պատմությունը՝ ներկայիս եւ անցյալի միջեւ անդադար երկխոսություն է: Ըստ նրա, անցյալի մեկնաբանությունները (ինտերպրետացիաները) կարող են փոխվել պատմական նոր փաստերի հայտնաբերման, արդեն բացահայտված տվյալների վերաբերյալ հարցերի առաջացման, ժամանակի հետ մեկտեղ առաջացող անցյալի ավելի լավ ընկալման հետեւանքով: Մաքֆերսոնը պնդում է, որ գոյություն չունի անցյալի իրադարձությունների եւ դրանց նշանակության միակ, հավերժ եւ անփոփոխ «ճշմարտություն»: Պատմաբանների անցյալը պարզելու հավերժ փորձերը, հենց, ըստ էության, «ռեվիզիոնիզմը» պատմագիտությունը դարձնում են կենսական կարեւորություն ունեցող եւ նշանակալից:

Անհրաժեշտ է ավելացնել, որ բացի այդ պատմագիտության շրջանակներում գոյություն ունի ռեվիզիոնիստական դպրոց, որն առանձնանում է պատմության ավանդական ինտերպրետացիաների ռադիկալ վերանայմամբ: Այդ դպրոցի վառ ներկայացուցիչներն են՝ Ալֆրեդ Քոբբենը, Ռայմոն Առոնը, Ֆրանսուա Ֆյուրեն: Վերջինս նաեւ հայտնի է ԽՍՀՄ-ի վերաբերյալ իր աշխատությունով, որտեղ նա զուգահեռներ է անցկացնում ֆաշիստական Գերմանիայի եւ ԽՍՀՄ-ի միջեւ: Ֆրասուա Ֆուրյեն նշում է, որ՝ «Երեք ֆենոմենների՝ կոմունիզմի, ֆաշիզմի, նացիոնալ-սոցիալիզմի համեմատելիության խնդիրը ուշադրության կենտրոնում է արդեն 20 դարի առաջին երրորդում, չնայած դեռ չի գտնվել նրա ձեւակերպման համար `անհրաժեշտ հասկացությունը[1]»:

Պետք է հիշատակել, որ ԽՍՀՄ քաղաքական ռեժիմին, հատկապես նրա ստալինյան շրջանին հստակ գնահատականներ են տրվել մի շարք միջազգային կառույցների կողմից՝ հիմնականում որոշակի բանաձեւերի միջոցով: Օրինակ՝ ԵԱՀԿ ԽՎ-ի «Բաժանված Եվրոպայի վերամիավորումը» 2009թ. ընդունված բանաձեւում նշվում է, որ նացիստական եւ ստալինյան ռեժիմները իրականացրել են ցեղասպանություն, մարդու իրավունքների ոտնահարում, մարդկության դեմ հանցագործություններ[1]: Բանաձեւում նշվում է, որ պատմության իմացությունը օգնում է խուսափել ապագայում նման հանձագործությունների կրկնությունից: Նույն բանաձեւում անդամ պետություններին կոչ է արվում շարունակել տոտալիտար ժառանգության ուսումնասիրությունը, մշակել եւ կատարելագործել ուսումնական ձեռնարկներ տոտալիտարիզմի պատմության վերաբերյալ, իրականացնել միջոցառումներ, հատկապես, երիտասարդ սերնդի համար, բարձրացնել հանրության տեղեկացվածությունը տոտալիտարիզմի վերաբերյալ:

Բանաձեւում կառավարություններին նաեւ կոչ է արվում հրաժարվել տոտալիտար անցյալը գեղեցկացնելու, նրան վերադառնալու փորձ կատարելու վարքից: Իսկ Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1481 (2006) բանաձեւում, որը նվիրված է կոմունիստական տոտալիտար ռեժիմների հանձագործությունները դատապարտելու անհրաժեշտության խնդրին, նաեւ կոչ է արվում կունիստական կամ հետկոմունիստական կուսակցություններին վերագնահատել կոմունիզմի պատմությունը, սեփական անցյալը[2]:

Հարկ է նշել, որ նախկին սովետական միության տարածքում սովետական շրջանի վերաբերյալ գնահատականները պետության քաղաքականության մասն են եւ հետաքրքրական է նաեւ այն, որ շատ երկրներում, այդ թվում, ավտորիտար համարվող երկրներում պետական մակարդակով դատապարտվել են սովետական շրջանում

իրականացված բռնությունները: Նման քաղաքականության վառ արտահայտումներից մեկն է հանդիսանում տարբեր տեսակի թանգարանների, հուշահամալիրների ստեղծումը: Օրինակ, մերձբալթյան պետություններում եւ Վրաստանում գործում են թանգարաններ, որոնց միջոցով այդ երկրների իշխանությունները ցանկանում են ցույց տալ, որ Խորհրդային միությունը իրենց ժողովուրդների նկատմամբ իրականացրել է ցեղասպանության քաղաքականություն եւ որ խորհրդային շրջանում իրենց երկրներում գործել է օկուպացիոն ռեժիմ: Տալլինում գործում է Օկուպացիայի թանգարան, Ռիգայում՝ Սովետական օկուպացիայի թանգարան, Վիլնյուսում՝ Ցեղասպանության զոհերի թանգարան, Ուկրաինայում եւ Վրաստանում՝ Խորհրդային օկուպացիայի թանգարաններ[3]:

Հարկ է նշել, որ նախկին ԽՍՀՄ-ի մաս կազմող միջինասիական երկրներում, որոնք համարվում են տարբեր մակարդակի ավտորիտար երկրներ, նույնպես գործում են սովետական շրջանին նվիրված թանգարաններ ու հուշահամալիրներ, սակայն, դրանք, կենտրոնացված են սովետական շրջանի բռնաճնշումների վրա եւ իրենց անվանումներում չկան «օկուպացիա», կամ «ցեղասպանություն» բառերը: Այդպիսի թանգարաններից են՝ Քաղաքական բռնաճնշումների զոհերի թանգարանը Ուզբեկստանում, «ԱԼԺԻՐ» թանգարանը Ղազախստանում, Աթա-Բեյիթ հուշահամալիրը Ղրղստանում:

Հետաքրքրական է նաեւ դիտարկել եվրոպական երկրների փորձը իրենց ավտորիտար շրջանի պատմության վերանայման, գնահատականներ տալու վերաբերյալ քաղաքականության առումով, որը կարող է օգտակար լինել ժողովրդավարության ուղի բռնած եւ նման պատմություն ունեցող Նոր Հայաստանի համար: Օրինակ՝ Գերմանիայում քաղաքացիական կրթության հիմքում ընկած է դեռեւս 1976-ին ընդունված Բոյթելսբախյան համաձայնությունը («*Beutelsbacher Konsens*»), որի հիմքում ընկած է ինդոկտրինացիայի արգելման սկզբունքը[4]: Այդ սկզբունքի բովանդակությունը հետեւյալն է՝ որոշակի քաղաքական տեսակետի պարտադրումից խուսափելու համար հարկ է ներկայացնել յուրաքանչյուր երեւույթին բնորոշ հակասությունները, բացահայտել տարբեր դիտանկյունները եւ հնարավորություն տալ ուսուցանվողին ձեւավորել սեփական տեսակետը:

Կոմունիստական շրջանի վերաբերյալ չափազանց կոշտ մոտեցում կա մի շարք արեւելաեվրոպական երկրներում (օրինակ Լեհաստան, Ուկրաինա): Դրանցում գործում են դեկոմունիզացիայի մասին օրենքներ, որոնցով ընդգծվում է սովետական անցյալի նկատմամբ պետության դատապարտող քաղաքականությունը: Օրինակ, Լեհաստանի դեկոմունիզացիայի օրենքի 2017-ին ընդունված լրացումներով նախատեսված է սովետական շրջանի հուշարձանների ապամոնտաժում: Այդ

լրացումների համաձայն հուշարձանները *«չեն կարող հարգանքի տուրք մատուցեն կոմունիզմ կամ այլ տոտալիտար համակարգ խորհրդանշող անձերին, կազմակերպություններին, իրադարձություններին կամ տարեթվերին»:* Օրենքը նաեւ արգելում է կոմունիստական գործիչների եւ կոմունիստական կուսակցության ունուններով փողոցներ, դպրոցներ, մշակութային կենտրոններ ունենալ: Սովետական շրջանում կառուցված հուշարձաններից պետք է հանվեն նույնիսկ հնգանկյուն աստղերը, կամ այլ խորհրդանիշները, որոնք *«փառաբանում են սովետական համակարգը*[5]»:

Մերձբալթյան պետությունների կողմից ստալինյան ՆԿՎԴ-ի քաղաքական բռնաճնշումները, զանգվածային աքսորը դեպի Սիբիր, կոլեկտիվիզացիայի արշավները դիտարկվում են որպես սովետական ցեղասպանության տարրեր: Այդ հանցագործություններն ապացուցող փաստեր հավաքելու եւ դրանք վերլուծության ենթարկելու համար այդ երկրներում ստեղծվել են տարբեր հանձնաժողովներ, հետաքննական խմբեր[6]:

Փաստացի, կարող ենք նշել, որ եվրոպական մի շարք երկրներում, մի կողմից, իրականացվում է պատմությունը քննադատական մոտեցումներով, առանց գաղափարափոսական սահմանափակումների վերանայելու քաղաքականություն, իսկ մյուս կողմից, կոմունիստական շրջանի քաղաքական ռեժիմը դատապարտելու քաղաքականություն: Հարկ է նշել, որ այս տեսակ քաղաքականությունը առաջացնում է պաշտոնական Մոսկվայի խիստ բացասական արձագանքը՝ Կրեմլը նման դրսեւորումները դիտարկում է որպես անարգանք այն մարդկանց նկատմամբ, որոնք իրենց կյանքի գնով ազատագրել են Եվրոպան ֆաշիզմից[7]:

Փորձագետների ձայնը

Հետազոտության շրջանակներում, հետաքրքիր համարեցինք, առանց ներկայացուցչականություն ապահովելու նպատակի պարզել սովետական անցյալի նկատմամբ քննադատական հայացք ունեցող, հասարակական ակտիվություն ցուցաբերող եւ դեմոկրատական փոփոխությունների կողմնակից ակադեմիական շրջանակները ներկայացնող մարդկանց մոտեցումները: Այս խնդիրն առավել ակտուալ դարձրեց 2018-ի ապրիլ-մայիս ամիսների քաղաքացիական անհնազանդության արշավի արդյունքում Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունը եւ դեմոկրատական ռեֆորմների նախաձեռնումը, քանի որ գոյությունի ունի

կանխավարկած, որ հետհեղափոխական Հայաստանում քաղաքականություններ մշակող եւ իրականացնողների եւ հասարակության ակտիվ շերտերի վրա մեծ ազդեցություն կարող են ունենալ հենց այդ շրջանակների ներկայացուցիչները:

Վերոնշյալ խնդիրն իրականացնելու համար կիրառվել է խորքային հարցազրույցների մեթոդը:

Սովետիզացիա՝ փրկվելու նպատակով դրսից պարտադրված իշխանության հանձնում

Անդրադառնալով Հայաստանի սովետիզացիայի, այլ կերպ ասած, Հայաստանում սովետական կարգերի հաստատման գործընթացի հարցին, մեր զրուցակիցները բնորոշել են այն որպես *«ներմուծված հեղաշրջում», «օկուպացիա», «օկուպացիա՝ փրկվելու պատրվակի տակ»,* ճնշման տակ *«իշխանության հանձնում խաղաղ ճանապարհով», «դրսից սատարված հեղաշրջում», «բռնի գործընթաց»:*

Ինչպես երեւում է, Հայաստանի սովետիզացիային տրված բոլոր բնորոշումներին հատուկ է առնվազն մեկ ընդհանուր գիծ՝ համոզմունք, որ այդ գործընթացը դրսից պարտադրված է եղել: Հարցվածներից որեւէ մեկը չի նշել, որ սովետական կարգերի հաստատումը տեղի է ունեցել Հայաստանի ժողովրդի ազատ կամքի արտահայտման արդյունքում: Մեր զրուցակիցները նշում էին, որ *«բոլշեվիկները չունեին հանրային հենարան»,* որ նրանք *«թույլ դիրքեր ունեին»:*

Հարցազրույցների մասնակիցներից որեւէ մեկը չի համարում, որ Հայաստանում եղել է բոլշեվիկյան հեղափոխություն, ինչպիսին, օրինակ, 2017-ի հոկտեմբերյան հեղափոխությունն էր Ռուսաստանում: Սակայն, շատերը, ինչպես երեւում է բնորոշումներից, Հայաստանի սովետիզացիան դիտարկում են որպես *«հեղաշրջում»*: «*Վերնախավերով պայմանավորվածություն է տեղի ունեցել՝ մենք հանձնում ենք, դուք վերցնում եք, որպեսզի կարողանանք պետությունը փրկել*» այս տեսակետը կարելի է ընդհանրական համարել:

Նաեւ հետաքրքրական է այն, որ սովետիզացիան որպես «օկուպացիա», կամ «հեղաշրջում» անվանողներից շատերը այն դիտարկում են որպես Հայաստանը փրկելու նպատակ ունեցող քայլ. *«Դա օկուպացիա էր փրկվելու պատրվակի տակ»:* Նշվում էր նաեւ, որ սովետական կարգերի հաստատումը *«Հայաստանում պետական միավոր ստեղծելու եւ մայրաքաղաքային, քաղաքային կյանք ստեղծելու փորձ էր»*:

Այնուամենայնիվ մեր զրուցակիցներից շատերն էլ նշում էին, որ Հայաստանում սովետական կարգերի հաստատումը լիովին օկուպացիա կոչելը սխալ է, քանի որ՝ «*կործանված Հայաստանից ինչ-որ բան է ծնվում նաեւ*», «*մի տեսակ ամբողջ քո սովետական անցյալը դեն ես գցում», «իշխանությունը հանձնվել է խաղաղ*

ճանապարհով, պայմանագրով», «իշխանությունը հանձնվում է ոչ թե ռուսներին, այլ հայ բոլշեվիկներին»:

Այսինքն, կարող ենք ասել, որ մեր զրուցակիցները գտնում են, որ սովետիզացիայի գործընթացում բացակայում են դասական օկուպացիային բնորոշ որոշ տարրեր:

Հնչել է նաեւ տեսակետ, որ *«հայ պատմագրության մեջ լավ չեն դրվել սովետիզացիայի հետ կապված հարցերը՝ ի՞նչ է այն, ինչպե՞ս է տեղի ունեցել...այս ամենը պետք է քննարկվի, հիմա չկան հստակ պատասխաններ»:* Նշվել է նաեւ, որ հենց այսպիսի հետազոտություններն են նպաստում, որ նմանատիպ հարցեր բարձրացվեն, մոտեցումներ վերանայվեն եւ այլն:

ԽՍՀՄ-ը որպես տոտալիտար ռեժիմ եւ ավտորիտար մոդեռնիստական նախագիծ

Փորձագետները միասնական էին ԽՍՀՄ քաղաքական ռեժիմը որպես, ընդհանուր առմամբ, տոտալիտար որակելու մոտեցումներում, թեեւ շատերը նշում էին, որ որոշ շրջաններում Խորհրդային միությունը ավելի շատ ավտորիտար, կամ փափուկ տոտալիտարիզմի ռեժիմ ունեցող պետություն էր:

Սակայն, այսքանով հանդերձ, հնչել է տեսակետ, որ *«կարիք չկա ներկայացնել ԽՍՀՄ-ը որպես չարիքի կայսրություն»:* Փորձագետները գտնում են, որ ԽՍՀՄ-ը տարիների ընթացքում *«գիտատեխնիկական, մշակութային վերելք է ապրել»* եւ տեղի է ունեցել *«բուրժուական շրջանին բնորոշ մոդեռնիզացիա, բայց այն տարբերությամբ, որ դա վերեւից էր արվում»: «Եղել են նաեւ դրական իրողություններ, տեղաշարժեր»* - այս տեսակետը կարելի է ընդհանրական համարել:

Բայց փորձագետները նաեւ գտնում են, որ իրենց կողմից նշված դրական երեւույթները եղել են հետստալինյան շրջանում, իսկ *«ստալինյան շրջանը միանշանակ բռնությունների շրջան էր եւ որեւէ լավ բան չկա այդ շրջանում»:*

«Երկրորդ հանրապետություն», թե՞ «օկուպացված տարածք»

Փորձագետների մոտեցումները տարբերվում էին այն հարցի վերաբերյալ, թե արդյո՞ք ճիշտ է սովետական Հայաստանը կոչել երկրորդ հանրապետություն: Հնչել են տեսակետներ, որ, թեեւ Հայաստանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը անկախ չէր եւ տոտալիտար կամ ավտորիտար համակարգ էր, սակայն, մի շարք պատճառներով ճիշտ է վերջինս երկրորդ հանրապետություն համարել՝ *«այն այնուամենայնիվ հանրապետություն էր: Կար սեփական պետական ապարատ: Դա լիարժեք անկախություն չէր, բայց այնպես էլ չէր, որ մենք ռուսի լծի*

տակ էինք»: Սակայն, փորձագետներից մեկը նշել է, որ դեմ է սովետական Հայաստանը երկրորդ հանրապետություն անվանելուն, քանի որ *«դա օկուպացված տարածք էր»* եւ ավելացրեց, որ, *«ճիշտ չէ լեգիտիմացնել գաղութատիրությունը, դու դրանով նաեւ նեոգաղութատիրությունն ես լեգիտիմացնում»:*

Հայ բոլշեվիկների նկատմամբ տարբերակված մոտեցում

Փորձագետները միակարծիք էին հայ բոլշեվիկների նկատմամբ իրենց վերաբերմունքում: Նրանք նշում էին, որ անհրաժեշտ է տարբերակված մոտեցում ցուցաբերել նրանց նկատմամբ: *«Շատերը չմտածված, գաղափարական ազդեցության տակ գտնվող հանցագործներ էին, շատերը ոգեշնչված գաղափարական միամիտներ էին, ովքեր իրոք հավատում էին սոցիալիզմի հաղթանակին»*՝ այս տեսակետը կարող ենք ընդհանրական համարել: Որպես ընդհանուր մոտեցում արտահայտող կարող ենք նշել նաեւ հետեւյալ խոսքերը՝ *«ռեպրեսիաների շրջանի բոլշեվիկները իհարկե գործակալներ էին», «նրանք բռնաճնշումներով, անօրինականությամբ էին զբաղված»:*

Բայց նույնիսկ բռնաճնշումներ իրականացրած եւ, ընհանուր առմամբ, փորձագետների կողմից որպես բացասական կերպար ընկալվող Անաստաս Միկոյանի նկատմամբ մեր զրուցակիցներից շատերը տարբերակված մոտեցման կողմնակից են՝ *«Միկոյանին պատկերացնում եմ որպես մի մարդ, որ մի կողմից որպես դիվանագետ լուրջ ձեռքբերումներ է ունեցել, մյուս կողմից, մասնակցել է զանգվածային բռնաճնշումներին», «որպես դիվանագետ, տնտեսագետ ԽՍՀՄ–ի տնտեսության համար Միկոյանը կատարել է զգալի դրական բաներ»:*

Բայց նաեւ հնչել է համոզմունք, որ Միկոյանը միանշանակ բացասական կերպար է: Փորձագետները նաեւ միակարծիք էին այն հարցում, որ որեւէ առանձին վերցրած դրական գործողություն չի կարող արդարացնել բռնությունները կամ ոչ իրավական գործելակերպը եւ, որ հատկապես ստալինյան շրջանի բարձրաստիճան պաշտոնյաները, այդ թվում, ազգությամբ հայերը պատասխանատվություն են կրում այդ ամենի համար:

Գերիշխող մոտեցում է, որ չի կարելի դատապարտել բոլշեվիկներին միայն այն բանի համար, որ նրանք բոլշեվիկ են եւ որ միանշանակ պետք է դատապարտել բոլոր նրանց, որոնք բռնաճնշումներ են իրականացրել: *«Դժվար է ասել ու շատ խիստ բարոյական մոտեցում կլինի, երբ ասենք, որ հայ կոմունիստները, անկախ ամեն ինչից, պատասխանատվություն են կրում ԽՍՀՄ-ի կողմից մարդու իրավունքների ոտնահարումների համար»* - այսպիսի մոտեցումը ցույց է տալիս, որ փորձագետները հակված չեն ոչդեմոկրատական ռեժիմի համար մեղադրել հասարակությանը, թեկուզ նրա կուսակցական հատվածին: Նաեւ կար տեսակետ, որ հայ բոլշեվիկների

դատապարտման խնդիրը *«այնպիսի հարց է, որի շուրջ հայ հասարակությունը պատրաստ չէ խոսել»:* Մեր զրուցակիցներից շատերը նշում էին նաեւ կոնկրետ մարդկանց օրինակներ, որոնք, ի պաշտոնե, չէին կարող ներգրավված չլիներ բռնաճնշումների գործընթացում՝ *«Ենթադրում եմ, որ եթե, օրինակ, Խանջյանի գործողությունը ուսումնասիրվի, ապա կպարզվի, որ նա կապված է եղել զանգվածային բռնաճնշումների հետ, հնարավոր չէ այլ կերպ լինի, ինքը պետական քաղաքական գործիչ էր, նա չէր կարող պատասխանատու չլիներ»:*

Սովետական անցյալի ժառանգություն՝ հպատակային քաղաքական մշակույթից մինչեւ գիտատեխնիկական վերելք

Հետաքրքրական են փորձագետների Հայաստանի ժողովրդի զարգացման վրա սովետական անցյալի ազդեցության բովանդակության վերաբերյալ մոտեցումները: Նախ հարկ է նշել, որ սովետական անցյալի ազդեցությունը որպես միանշանակ բացասական գնահատող որեւէ տեսակետ չի հնչել: Ասվում էր, որ քաղաքական մշակույթի առումով ազդեցությունը բացասական է՝ *«միակուսակցական համակարգի մշակույթ է, որը բացասաբար է ազդել», «բռնության մշակույթը, անհանդուրժողականությունը եւ այլն դրանք, առնվազն մասնակի, սովետական ազդեցության հետեւանք են»:* Հնչել են նաեւ տեսակետներ, որ օրինակ, 30-ականները հայ ժողովրդի վրա որեւէ դրական ազդեցություն չեն ունեցել:

Սակայն բոլոր փորձագետները միակարծիք են, որ սովետական շրջանում *«ունեցել ենք գիտատեխնիկական մեծ վերելք»,* մշակութային առաջընթաց է տեղի ունեցել, *«նորմալ մարդկանց էին դաստիարակում»*: Փորձագետներից մեկի կողմից նշվել է, որ որպես ձեռքբերում պետք է գնահատել նաեւ այն, որ *«ազատվել ենք թուրքական վտանգից»*: Որպես խորհրդային շրջանի դրական ազդեցության դրսեւորում մեկ այլ փորձագետ վկայակոչում էր նաեւ այն, որ *«սովետական մարդը բարի է, ընկերասեր է»:* Սակայն հետաքրքիրն այն է, որ նույն մարդը նաեւ նշվել է, որ *«դեմ է որպեսզի սովետական անցյալը գնահատվի ռուսական գաղութատիրական նարատիվներով՝ որ նա մեզ քաղաքակրթել է, որ եթե նա չլիներ, մենք կմնայինք ցեխի եւ քարքարուտների մեջ»:*

Այսինքն, կարող ենք եզրակացնել, որ սովետական շրջանի դրական ազդեցությունը կապվում է մոդեռնիզացիայի հետ եւ ակնարկվում է, որ, թեեւ դա վերեւից ներքեւ իրականացվող մոդեռնիզացիա էր, բայց միեւնույնն է, չնայած բռնապետական ռեժիմի առկայությանը, նույնիսկ դա դրական ազդեցություն է ունեցել Հայաստանի վրա:

Միջազգային կազմակերպությունների բանաձեւերի ընկալումը որպես հիմնականում քաղաքականացված գնահատականների

Հարկ է նշել, որ փորձագետների մեծ մասը չի կարեւորում մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից ստալինյան եւ հիտլերյան ռեժիմները հավասարեցնող եւ դատապարտող համապատասխան բանաձեւերը: Ըստ փորձագետներից շատերի կարծիքի միջազգային կառույցները կոնյուկտուրային են, կոնկրետ պետությունների շահերն են սպասարկում, կողմնապահ են եւ այդ իսկ պատճառով նրանք իրենց արժեքը կորցնում են:

«Դա քաղաքական մոտեցում է եւ դա սխալ մոտեցում է», քանի որ «այդ ռեժիմները տարբեր են եւ ամեն ռեժիմ պետք է գնահատել իր տարբերության մեջ»՝ ահա այսպիսին էր նրանց հիմնական մոտեցումը: Եվ որպես հիմնական տարբերություն նշվում էր այն հանգամանքը, *որ «հիտլերյան ռեժիմը հիմնված էր ազգի բացառիկության գերակայության վրա, ինչը չկար ստալինյան ռեժիմի պարագայում որտեղ, հակառակը, ինտեռնացիոնալիզմի վրա էր կառուցված»:* Ըստ փորձագետներից շատերի տեսակետի կոմունիստական եւ ֆաշիստական պետությունները համեմատելի են զանգվածային ռեպրեսիաների, սպանությունների առումով, բայց այդ պետությունները տարբեր են պետական մակարդակով իրականացրած հանցանքների բնույթի տեսակետից, տարբեր են նաեւ գաղափարախոսության տեսանկյունից:

Փաստացի փորձագետները թեեւ գտնում են, որ ստալինյան եւ հիտլերյան ռեժիմները տոտալիտար են եւ մարդկության դեմ հանցանքներ են գործել, սակայն դեմ են, որ դրանց նկատմամբ լինի ընդհանրական վերաբերմունք: Այսպիսի դիրքորոշման հիմքում ընկած է հիմնականում երկու պատճառ՝ քանի որ, մի կողմից, ըստ փորձագետների, տարբեր են այդ ռեժիմների գաղափարախոսությունները եւ վերջիններիս կողմից իրականացված հանցագործությունների բնույթը, մյուս կողմից, միջազգային կառուցների կողմից դատապարտումը զուտ քաղաքական, կոնյուկտուրային դրդապատճառներից ելնելով է իրականացվում:

Սակայն հնչել է նաեւ տեսակետ, որ *«Հայաստանը պետք է միանա նման բանաձեւերին ու դրանով ցույց տա, որ բռնությամբ ցանկացած փոփոխություն իրականացնելը անընդունելի է իր համար»:*

Հայ բոլշեվիկների արդարացումը և Հայաստանի սովետական շրջանի ռոմանտիզացումը որպես ավտորիտարիզմի դրսեվորում

Սովետական անցյալի նկատմամբ Սերժ Սարգսյանի կողմից գլխավորած իշխող քաղաքական վերնախավի մոտեցումները առավելագույնս պարզվեցին 2017-ին, երբ Երեւանի խորհրդարանի «ԵԼՔ» խմբակցության կողմից առաջարկված փողոցների անվանափոխության նախաձեռնությունը եւ Հ. Թումանյանի տուն-թանգարանում սովետական շրջանում բռնադատվածների խնդրին նվիրված «Խավարում» ցուցահանդեսի փակումը (մշակույթի փոխնախարարը նշել էր, որ ցուցահանդեսը «քաղաքականացված է» և որ «միայն որոշակի շտկումներից հետո հնարավոր կլինի այն վերականգնել) նպաստեցին ինտենսիվ հանրային բանավեճի ծավալմանը, որի շրջանակներում ՀՀԿ ներկայացուցիչները եւ այդ ժամանակվա ռեժիմը սատարող քաղաքական, գիտական, մշակութային ոլորտի գործիչները տարատեսակ հարթակների միջոցով իրենց դիրքորոշումը հայտնեցին խնդրո շուրջ[8]»:

Հետաքրքրական է, որ մեդիա դաշտի որակական հետազոտությունը ցույց տվեց, որ Հանրային հեռուստաընկերության կամ այլ բարձր վարկանիշ ունեցող հեռուստաընկերությունների միջոցով քարոզչություն չի իրականացվել, ինչը կարող է բացատրվել այն հանգամանքով, որ այդ հեռուստաընկերությունները, հիմնականում, դուրս են եղել հասարակական-քաղաքական կյանքի լուսաբանումից, քիչ են անդրադարձել քաղաքական բանավեճերին եւ այլն: Որպես իշխանական քարոզչության հիմնական հարթակ օգտագործվել է «Արարատ» հեռուստաընկերությունը: Իշխող կուսակցության եւ նրան սատարող ներկայացուցիչներն իրենց քարոզչությունն իրականացրել են հիմնականում հարցազրույցների միջոցով:

Սովետական անցյալի պաշտպանությունը՝ դիմացինին չասված գաղափարներ վերագրելու միջոցով

Հայաստանի հանրապետական կուսակցության ներկայացուցիչները, անդրադառնալով ԵԼՔ-ի նախաձեռնությանը, նշում էին, որ փողոցների անվանափոխությունը *«արհեստածին հարց է»*[9]: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանի կոմունիստական շրջանի քաղաքական գործիչների նկատմամբ վերաբերմունքին, ապա հայտարարվում էր, որ անհրաժեշտ է իրականացնել հաշտության գործընթաց: Հղում էր արվում եվրոպական երկրներին, որոնց քաղաքներում, օրինակ, Լոնդոնի հրապարակներից մեկում, մի կողմից, տեղադրված է Կառլոս առաջինի, մյուս կողմից՝

Կրոմվելի արձանները: Ասվում էր, որ եվրոպացիները իրենց պատմության հետ կատակներ չեն անում եւ որ հայերը չպետք է ամաչեն իրենց պատմության համար: ՀՀԿ-անները նշում էին, որ չի կարելի հերքել սովետական անցյալը եւ որ այդ անցյալը հերքելով մենք խնդիրներ ենք ստեղծում մեր գալիք սերունդների համար[10]:

Փաստացի ակնարկ էր արվում, որ փողոցների անվանափոխության խնդիր բարձրացնողները *«հերքում են սովետական անցյալը»*: Սակայն պետք է նկատել, որ անվանափոխության նախաձեռնողներից որեւէ մեկը սովետական անցյալի վերաբերյալ նման դիրքորոշում երբեւէ չի հայտնել եւ ստացվում է, որ հանրապետականների այդ ակնարկը՝ մանիպուլյատիվ հնարք էր:

«Չի կարելի մեր ժողովրդի վզին փաթաթել, որ մենք եղել ենք Խորհրդային միության գաղութը, ռուսի գաղութը: Մենք երբեք ոչ մեկի գաղութը չենք եղել, մենք այլ պետությունների մաս ենք եղել[11]» - այս դատողությունը բերվում էր ի պատասխան բռնաճնշումներ իրականացրած հայ բոլշեվիկներին ու սովետական ռեժիմը քննադատելուն:

Սովետական անցյալը քննադատողներին որպես օտար ուժերին ծառայողների, պատմություն սեւացնողների եւ ռուս-հայկական բարեկամության վրա ստվեր գցողների, կոնֆլիկտներ ստեղծողների պիտակավորելու քարոզչական հնարքը

Հանրապետականներից շատերը հայտարարում էին, որ փողոցների անվանափոխության նախաձեռնության հետեւում կանգնած է այլ երկիր, ավելի կոնկրետ՝ ԱՄՆ-ը[12]: Ակնարկվում էր, որ այդ քաղաքականությունը իրականացվում է Ռուսաստանի դիրքերը թուլացնելու եւ Հայաստանի վրա ԱՄՆ-ի ազդեցությունը ուժեղացնելու համար:

Ըստ մինչհեղափոխական իշխող քաղաքական վերնախավի ներկայացուցիչների, չի կարելի քննադատել այն մարդկանց, որոնք պետություն էին ստեղծում: Հաճախ նշվում էր, որ խորհրդային տարիները Հայաստանի համար ռենեսանսային տարիներ էին: Հայտարարվում էր, որ փողոցների անվանափոխության նախաձեռնությունը՝ մեր պատմության սեւացում է եւ որ այն ստվեր է գցում Ռուսաստանի հետ մեր բարեկամության վրա: *«Մենք մեր պատմությունից չպետք է հրաժարվենք[13]»*՝ արձագանքում էին «ԵԼՔ»-ի նախաձեռնությանը քաղաքային իշխանությունները: *«Բոլշեվիզմը եղել է 70 տարի եւ մի գրչի հարվածով չի կարելի դա ջնջել[14]»:* Որպես սեփական դիրքորոշման հիմնավորում քարոզիչները վկայակոչում էին նաեւ երկրորդ

համաշխարհային պատերազմի վետերանների բողոքը, անհանգստությունը փողոցների անվանափոխության նախաձեռնության նկատմամբ: Այսինքն ակնարկվում էր, որ նախաձեռնությունը կոնֆլիկտ է առաջացնում հասարակությունում եւ վիրավորում է կոնկրետ խմբերի: *«Սեւացնել», «պախարակել»*՝ սրանք ամենից շատ կրկնվող որակավորումներն էին, որոնք տրվում էին Խորհրդային Հայաստանի պատմության վերանայման կողմնակիցներին:

Բռնությունների անուղղակի արդարացում

Նշվում էր նաեւ, որ սովետական Հայաստանում բռնություններ, իհարկե, եղել են, բայց միշտ այդ խոսքերին զուգահեռ կարծես թե դրանք արդարացնող հետեւյալ արտահայտությունն էր արտաբերվում՝ «իսկ որտեղ չեն եղել բռնություններ»: Այսինքն, կարող ենք եզրակացնել, որ մինչթավշյահեղափոխական շրջանում իշխող հանրապետական վերնախավը ցանկանում էր համոզել քաղաքացիներին, որ բռնաճնշումները պատճառ չեն հայ բոլշեվիկներին քննադատելու համար, քանի որ նրանց գործունեության տարիներին Հայաստանը զարգացում է ապրել: «Միկոյանը մեր ազգի պարծանքն է, նա համաշխարհային հարցեր է լուծել, Հայաստանի համար ամենօրյա հարցեր է լուծել»... «երբ ուզում են պետություն քանդել, ապա ցեխ են շպրտում այդ ազգի վրա»՝ նշում էր իշխող քաղաքական ուժը ներկայացնող պատգամավորներից մեկը:

Լրագրողներն ու գիտնականները՝ որպես իշխանական քարոզիչներ

Հարկ է նշել նաեւ, որ սովետական անցյալի վերաբերյալ հեռուստահաղորդումներում հաճախ հենց հաղորդավարն է կողմնակալ եւ փողոցների անվանափոխության նախաձեռնողներին չեղած խոսքեր վերագրելու քաղաքականություն վարել, ինչից անմիջապես օգտվել են ՀՀԿ-անները: Օրինակ, «Արարատ» հեռուստաընկերության հաղորդումներից մեկի ժամանակ լրագրողը պնդում էր, որ փողոցների վերանվանման հարցում «ԵԼՔ»-ը ասում է, որ մոռանանք անցյալը եւ կերտենք անկախ Հայաստան, ինչին ՀՀԿ-անը պատասխանում է, որ դա կատարյալ հիմարություն է[15]: Ըստ վերջինիս՝ այդ նախաձեռնությունը լավ կազմակերպված սցենար է, որ մենք հակադրենք մեր պատմության տարբեր շրջանները եւ դա կարող է լինել ուրիշների, այլ երկրների նպատակը: Հարկ է նշել, որ սովետական անցյալի վերանայման կողմնակիցների դեմ իրակացվող քարոզարշավին մասնակցել են նաեւ պրոիշխանական մամուլը ներկայացնող մի շարք լրագրողներ: Այդպիսի

մամուլում տպագրված հոդվածներում տրվել են մասնավորապես հետեւյալ որակավորումները՝ «ամերիկյան դիվանագետները պատերազմ են մղում սովետական անցյալի ժառանգության հետ ոչ միայն Հայաստանում, այլ նաեւ Ուկրաինայում եւ Բալթյան երկրներում[16]»: «Պետք չէ պատերազմել սեփական անցյալի հետ», «պետք չէ ռուսաֆոբ հիստերիային տրվել[17]»՝ գրում էր ռուսալեզու թերթի լրագրողը անդրադառնալով փողոցների անվանափոխության «ԵԼՔ»-ի նախաձեռնությանը:

Հետաքրքիր էր, որ ՀՀԿ-անների դիրքորոշմանը սատարող գիտնականների կողմից նույնպես սովետական անցյալի վերարժեվորման կողմնակիցների պիտակավորում էր իրականացվում: Օրինակ, հնչում էին այսպիսի մտքեր՝ «Նույն բանն են անում, ինչ արվում է, օրինակ, մերձբալթիկայում եւ այնտեղ այդ բոլոր անցուդարձը ֆինանսավորում է Սորոսը. փաստեր չունեմ, բայց ձեռագիրը նույնն է[18]»:

Վերոնշալից ակնհայտ է դառնում նաեւ, որ իշխանական կամ պրոիշխանական քարոզչական տարրերից մեկը՝ ընդդիմադիրներին հակառուսականության եւ արտաքին ուժերի քաղաքականությանը ծառայելու մեջ մեղադրելու հնարքն էր:

Բռնաճնշումները որպես անխուսափելիություն ներկայացնելու հնարքը

ՀՀԿ-ական շրջանի իշխող քաղաքական վերնախավի ներկայացուցիչները նշում էին, որ «երեւի թե կան շրջանակներ, որոնք ցանկանում են հասարակության շրջանում ձեւավորել մոտեցումներ, որ մենք ամաչենք մեր պատմության համար[19]»: Հնչում էր նաեւ պնդում, որ «չի կարելի այսօրվա իրողություններով անցյալի նկատմամբ դատողություն անել»: Նշվում էր նաեւ, որ 30-անների տեռորը եղել է ոչ միայն ԽՍՀՄ-ում, այլեւ Եվրոպայի տարբեր երկրներում:

Փաստացի, ԽՍՀՄ-ում իրականացվող բռնաճնշումները փորձ էր արվում բացատրել համաշխարհային իրավիճակով, ներկայացնել այն որպես կոնկրետ ժամանակին բնորոշ անխուսափելի երեւույթ:

Արգրեսիվությունն ու կատեգորիկությունը՝ որպես իշխանական քարոզչության ոճ

Հարկ է նշել, որ ՀՀԿ-անների դիրքորոշման մեջ գերիշխում էր կատեգորիկ տոնը: Օրինակ, որպես ընդհանրական տեսակետ կարելի է համարել հետեւյալ խոսքերը՝ *«Միկոյանը որպես մեծություն հաստատվել է համաշխարհային պատմության մեջ որպես դիվանագետ. ես ոչ մեկին թույլ չեմ տալիս Միկոյանի կենսագրությունը*

քննարկելու, նա որպես լավագույն քաղաքագետ եւ քաղաքական գործիչ մտած է համաշխարհային պատմության մեջ[20]»:

ՀՀԿ-անների քարոզչության արշավին մասնակցում էին նաեւ հայ կոմունիստները՝ իրենց տեսակետները տարբեր ասուլիսների եւ հեռուստաբանավեճերի ժամանակ ներկայացնելու միջոցով: *«Նա կանխել է երրորդ համաշխարհային պատերազմը», «Միկոյանն էր, որ 1944-ին ներկայացրեց նախագիծ՝ արևմտյան Հայաստանը արևելյանին միացնելու մասին»: «Այո, եղել է 37 թիվը, բայց արդյո՞ք դրական բան չի եղել այդ 100 տարվա մեջ»: «Միայն նրա համար, որ Խորհրդային իշխանության ժամանակ Հայաստանն ընդունվեց 700 հազար բնակչով և հանձնվեց 4 միլիոն բնակչով, դա բավարար էր[21]...»՝* այս բոլոր խոսքերը լավագույնս են բնորոշում կոմունիստների քարոզչությունը:

Ուշադրության է արժանի նաեւ կոմունիստների քարոզչության ոճը՝ հաճախ այն խստ ագրեսիվ էր, պարունակում էր անձնական վիրավորանքներ իրենց ընդդիմախոսների նկատմամբ եւ գրեթե միշտ դիմացինին վարկաբեկելու նպատակ ուներ: Հետեւյալ օրինակները լավագույնս են բնորոշում այդ ոճը՝ *«քայլող աղբակույտ եք դուք, Միկոյանի նման մարդ, եթե Ադրբեջանը ունենար, աշխարհով մեկ պարծենալու էր[22]», «ամերիկայի դեսպանը հանդիպել է ԵԼՔ-ին եւ հանձնարարականներ է տվել[23]»:*

Պետք է արձանագրել, որ նույնիսկ հայ կոմունիստները ընդունում են, որ ԽՍՀՄ-ում առնվազն եղել է բռնաճնշումների շրջան, սակայն, նրանց պատկերացմամբ, դա հիմք չէ ԽՍՀՄ-ը, Հայաստանի սովետական շրջանը վերագնահատելու, սովետական ռեժիմը եւ կոնկրետ հայ բոլշեվիկներին դատապարտելու համար, քանի որ, ըստ կոմունիստների, սովետական շրջանում Հայաստանը զարգացում է ապրել, հայ բոլշեվիկները միջազգային մակարդակի դրական գործեր են արել, որ նրանք հայրենասերներ են եղել եւ այլն: Կոմունիստների քարոզչության մեջ նույնպես առկա էր այն թեզը, որ սովետական շրջանի նկատմամբ քննադատական վերաբերմունքի հետեւում կանգնած է Արեւմուտքը:

Պատմության վերանայման անթույլատրելիության դիսկուրսը

Ընդհանրապես ՀՀԿ-անների եւ նրանց սատարողների քարոզչությունը հիմնված էր այն գաղափարի վրա, որ չպետք է թույլ տալ վերանայել մեր պատմությունը: «Եթե թույլ տանք, որ ամեն հաջորդ սերունդը վերանայի ու մաքրագրի նախորդների

պատմությունները, ապա մենք երբեք պատմություն չենք ունենա[24]»՝ նշում էր հանրապետականներից մեկը:

Հանուն արդարության պետք է նշել նաեւ, որ սովետական շրջանը գովերգող եւ վերջինս քննադատությունից պաշտպանելու քաղաքականության հետ մեկտեղ հնչել է նաեւ ԽՍՀՄ շրջանի բռնությունները դատապարտող խոսք՝ *«բոլորն էլ գիտեն, թե ինչ դիրքորոշում ունի Հայաստանը՝ լենինյան, ստալինյան բռնապետության ժամանակաշրջանի հետ կապված: Այս տարի լրանում է հոկտեմբերյան հեղափոխության հարյուրամյակը, որից հետո սկիզբ դրվեց լուրջ, լայնածավալ մարդու իրավունքների խախտումներին ՀՀ-ում, որոնք իրենց գագաթնակետին հասան 37 թվին... Այդ ժամանակահատվածի գնահատականը արտացոլվում է նաեւ նրանում, որ պատրաստվում ենք կառուցել Հիշատակի թանգարան[25]»:* Սակայն պետք է նշել, որ այսպիսի կարծիքը եզակի է եւ կորում է այդ ժամանակվա իշխող քաղաքական վերնախավի պրոսովետական քարոզչության մեջ: Բացի այդ այն վերաբերմունք է արտահայտում ԽՍՀՄ-ի միայն կոնկրետ որոշակի շրջանի նկատմամբ եւ չի անդրադառնում կոնկրետ հայ բոլշեվիկների գործունեեությանը եւ վերջիններիս նկատմամբ որեւէ վերաբերմունք չի պարունակում:

Զգուշավոր դատապարտում

2018-ի «Թավշյա հեղափոխություն»-ից հետո Հայաստանում ձեւավորվեց, տրանզիտային շրջանի նոր իշխող քաղաքական վերնախավ, որը հիմնականում կոչված է ապահովել անցումը դեպի կայուն ժողովրդավարական Հայաստան, նպաստել ժողովրդավարական ինստիտուտների հաստատման գործընթացի անխափան ընթացքին: Այս առումով չափազանց կարեւոր է հասկանալ այդ վերնախավի ներկայացուցիչների մոտեցումները մի շարք կարեւորագույն գաղափարական հարցերի վերաբերյալ: Կարծում ենք, որ Հայաստանի սովետական անցյալի, հայ բոլշեվիկների, նրանց գործունեության, սովետական Հայաստանում հաստատված կոմունիստական ռեժիմի նկատմամբ մոտեցումները, անշուշտ այդպիսի հարցերից են: Սովետական անցյալի ընկալումները կարող են ցույց տալ նաեւ, թե ի՞նչ գաղափարական կողմնորոշիչների հիման վրա է իշխող քաղաքական վերնախավը կառուցելու սեփական քաղաքականությունը:

Հեղափոխությունից հետո ձեւավորված իշխող քաղաքական նոր վերնախավի շրջանում խնդրո վերաբերյալ առկա մոտեցումները, ընկալումները պարզելու համար

կիրառվել է խորքային հարցազրույցների մեթոդը: Խորքային հարցազրույցներ են իրականացվել տարբեր ոլորտները ներկայացնող իշխող քաղաքական վերնախավի մի շարք ներկայացուցիչների հետ: Մենք խնդիր չենք ունեցել ունենալ այդ վերնախավի պատկերացումների ամբողջական պատկերը, այլ ընդամենը նպատակ ենք հետապնդել բացահայտել, թե ինչպիսի մոտեցումներ գոյություն ունեն վերնախավի շրջանում սովետական անցյալի հետ կապված մի շարք հարցերի վերաբերյալ:

Սովետական կարգերի հաստատում՝ հետագա լեգիտիմացմամբ որոշ վերապահումներով ինքնակամ ընդունած օկուպացիա

Ըստ մեր զրուցակիցներից շատերի կարծիքի Հայաստանում սովետական կարգերի հաստատումը աշխարհաքաղաքական գործընթացների հետեւանք էր՝ այն *«անխուսափելի» էր, Հայաստանը այլ ելք չուներ «քան դառնալ սովետական», քանի որ «քեմալա-բոլշեվիկյան մերձեցման գործընթաց էր տեղի ունենում»: Ըստ այդ* մոտեցման կողմնակիցներից ոմանց կարծիքի ճիշտ չէ սովետական կարգերի հաստատումը օկուպացիա անվանել, *«թեեւ կարմիր բանակը մտել է Հայաստան»* եւ չնայած այն բանի, որ այդ կարգերի հաստատումը չի եղել ժողովրդի կամաարտահայտման արդյունքում: Ըստ այդ տեսակետի կողմնակիցների սովետական կարգերի հաստատումը օկուպացիա չանվանելու օգտին է խոսում այն, որ Հայաստանի իշխանությունները, միգուցե, ազգի պահպանության դրդապատճառից ելնելով, ինքնակամ համաձայնվել են սովետական կարգերի հաստատմանը եւ *«սովետական ռեժիմը լեգիտիմացվել է»:*

Նաեւ հարկ է նշել, որ այս թեզի կողմնակիցները դժվարանում էին ասել, արդյո՞ք կարելի է իրավական տեսակետից այդ գործընթացը օկուպացիա կոչել, թե ոչ:

Իսկ մեր զրուցակիցներից մեկն էլ, թեեւ ինչպես վերոնշյալի դեպքում սովետական կարգերի հաստատումը համարում է *«աշխարհաքաղաքական պրոցեսների հետեւանք», «գլոբալ գործընթացի մաս»*, այնուամենայնիվ, սովետիզացիան դիտարկում է որպես բռնություն, որպես *«կոմունիստական դիմակի տակ ռուսական կայսրություն վերականգնելու փորձ»: Ըստ այդպիսի տեսակետ արտահայտողներից մեկի՝ «Հայաստանը ճիշտ չկողմնորոշվեց», նա նաեւ համարում է, որ «մեծ հաշվով օկուպացիա է տեղի ունեցել»:*

«Ինտերվենցիա» եւ «բռնակցում»՝ նաեւ այսպես են մեր զրուցակիցները բնորոշել Հայաստանի սովետիզացիան: Այդպիսի բնորոշումների հիմքում ընկած է այն, որ՝ *«հայերի օգնությամբ ռուսական զորք է մտցվել»* եւ որ Հայաստանը առանց վերջինիս ժողովրդի կամարտահայտման *«բռնակցվել է մի միության»: «Ռուսատատնի բոլշեվիկյան կառավարությունը քեմալական Թուրքիայի օգնությամբ բռնակցեց*

Հայաստանը, գրավեց երկիրը, վերացրեց պետականությունը»՝ ահա նաեւ այսպիսի միանշանակ տեսակետ:

«Դաշնակցական կառավարության համար դա օկուպացիա էր, բայց մյուս դիրքերից դա Հայաստանի փրկություն էր, հայ բոլշեվիկների համար՝ լրիվ այլ բան էր»՝ ահա նաեւ այսպիսի մոտեցում, ըստ որի, տեղի ունեցածի գնահատականը կախված է հետազոտողի, քաղաքական գործչի սեփական դիտանկյունից:

Հնչել են նաեւ տեսակետներ, որ հետադարձ հայացք գցելով սովետիզացիային *կարող ենք ասել, որ դա «օկուպացիա էր, բայց օբյեկտիվ պայմանների բերումով օկուպացիա էր», որ սովետիզացիան դա «օկուպացիայի եւ կապիտուլյացիայի խառնուրդ է»*: Մեկ այլ նմանատիպ տեսակետ՝ *«սովետիզացիան կարող ենք դիտարկել որպես օկուպացիայի ակտ, բայց անելանելի իրավիճակ է եղել եւ հայկական էլիտան ինքնակամ ընդունել է դա»: Մեր* զրուցակիցների մեկն էլ նշեց, որ իր կարծիքով *«լայն շրջանակներով պետք է քննարկվի այն հարցը, թե արդյո՞ք սովետական կարգերի հաստատումը օկուպացիա պետք է կոչել եւ պետք է հասկանանք, թե մեր շահերի տեսակետից դա ի՞նչ է տալու մեզ»: Մեկ այլ կարծիք՝ «դա օկուպացիա էր, եթե օկուպացիա չէր, ապա ի՞նչ էր անում այստեղ կարմիր բանակը»:*

Սովետական կարգերի հաստատման բուն գործընթացին տրված գնահատականները կարող ենք պայմանականորեն բաժանել երեք խմբերի՝ առաջին խումբը Հայաստանում սովետական կարգերի հաստատումը համարում է որպես միանշանակ *օկուպացիա,* երկրորդ խումբը գտնում է, որ օկուպացիա տեղի է ունեցել, սակայն այն անխուսափելի էր, երրորդ խումբն էլ համարում է, որ այն ինչ տեղի է ունեցել, հավանաբար, չի կարելի համարել օկուպացիա, բայց, այնուամենայնիվ, դա բռնի գործընթաց էր, այլ ոչ թե ժողովրդի ազատ կամքի արտահայտում:

ԽՍՀՄ-ի որակումը որպես ոչդեմոկրատական, տոտալիտար պետություն

Հարկ է նշել, որ մեր բոլոր զրուցակիցները նշում էին, որ ԽՍՀՄ-ը ոչդեմոկրատական ռեժիմ էր: Մեր զրուցակիցների մեծ մասն անվանում է այն որպես հիմնականում տոտալիտար, երբեմն, ավտորիտար ռեժիմ: Նշվել է, որ ԽՍՀՄ-ում, հատկապես ստալինյան ժամանակաշրջանում, իրականացվել են զանգվածային բռնաճնշումներ: Որպես ԽՍՀՄ-ի տոտալիտար համակարգին բնորոշ բնութագրիչներ նշվում էր հետեւյալը՝ *«պետությունը եւ կոմկուսը սերտաճած էին», «կյանքի բոլոր ոլոտների ինտերվենցիա էր տեղի ունենում», «մարդը որեւէ արժեք չուներ», «քաղաքական հետապնդումներ, այլախոհության զսպում, ազգերի ձուլում»:*

«Երկրորդ հանրապետություն»-ը դասական առումով ոչ անկախ էր, ոչ էլ հանրապետություն էր

Արդյո՞ք կարելի է եւ ճիշտ է սովետական շրջանի Հայաստանը անվանել «երկրորդ հանրապետություն»՝ մեր զրուցակիցների զգալի մասը խոսելով այդ հարցի շուրջ նշել է, որ, այնուամենայնիվ, այդպիսի անվանումը արդարացված է: Սակայն, գրեթե բոլորն էլ նշում էին, որ բառիս բուն, դասական իմաստով սովետական Հայաստանը հանրապետություն չէր, քանի որ այն չուներ իրական անկախություն, իսկ իշխանությունն էլ Հայաստանի ժողովուրդին չէր պատկանում:

Որոշ վերապահումներով սովետական Հայաստանը երկրորդ հանրապետություն կոչելու թեզի օգտին բերվող հիմնական փաստարկները հետեւյալն էին՝ «*ամեն դեպքում Սովետական Հայաստանը չի եղել Ադրբեջանի, Միջին Ասիայի պետությունների նման թույլ քաղաքական համակարգ ունեցող պետություն: Մենք կարողացել ենք որոշակի ինստիտուտներ հաստատել, մենք շատ բաներ ժառանգել ենք երկրորդ հանրապետությունից», «օրակարգային հարց չեմ համարում, մենք սովետական ժառանգությունից շահած ենք դուրս եկել», «եթե մենք հիմա դնենք այս հարցը, որ ի՞նչու պետք է անվանենք սա երկրորդ հանարպետություն, ապա դա ռիսկային է, ինչքան լատենտ կոնֆլիկտներ կան հասարակությունում կարթնանան, բայց միգուցե ճիշտ է դա՝ չգիտեմ: Առնվազն քննարկում պետք է ծավալվի այս առումով», «այնումանենայնիվ, կար հանրապետություն, որոշակի անկախություն կար Սովետական միության շրջանակներում եւ հնարավոր դարձավ անցումը դեպի անկախություն նաեւ ի շնորհիվ նրա, որ դա հանրապետություն էր»:*

Սակայն ոմանք նշում էին նաեւ, որ չափազանց դժվար է սովետական Հայաստանը որպես երկրորդ հանրապետություն ընկալել՝ *«դժվար հարց է ճիշտ է համարել դա երկրորդ հանրապետություն, թե ոչ. իմ համար սովետական անցյալը կորսված ժամանակ էր»: «Եթե խոսում ենք անկախության տեսանկյունից շատ դժվար է երկրորդ հանրապետությունը անվանել հանրապետություն, քանի որ հանրապետությունը ենթադրում է անկախություն: Նաեւ արդյո՞ք հանրապետություն կարելի է կոչել այն միավորին, որի ղեկավարը միակ կուսակցության առաջին քարտուղարն էր»:*

Փաստորեն, սովետական Հայաստանը երկրորդ հանրապետություն կոչելու օգտին ներկայացվող հիմնական հիմնավորումն այն էր, որ այն ուներ պետականության ձեւական ինստիտուտներ եւ որոշ չափով, ի տարբերություն այլ սովետական հանրապետությունների, ուներ նաեւ իրական անկախություն, որը նաեւ հիմք դարձավ երրորդ հանրապետության հիմնադրման համար: Երկրորդ հանրապետություն

անվանելուն դեմ դիրքորոշման հիմքում էլ ընկած է այն գաղափարը, որ Հայաստանը անկախ չէր եւ չկար իրական ինքնակառավարում:

Տարբերակված մոտեցում եւ բռնությունների մեջ ներգրավված պաշտոնյաների անվերապահ դատապարտում

Ինչպիսի՞ վերաբերմունք ունեն մեր զրուցակիցները հայ բոլշեվիկների նկատմամբ, արդյո՞ք նրանց նկատմամբ պետք է տարբերակված մոտեցում ցուցաբերել եւ, ընդհանրապես, արդյո՞ք պետք է, որ պետությունը որոշակի վերաբերմունք արտահայտի նրանց նկատմամբ: Այս հարցերի վերաբերյալ մեր զրուցակիցների արտահայտած մտքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ գերիշխող տեսակետ էր այն, որ հայ բոլշեվիկների նկատմամբ պետք է տարբերակված մոտեցում ցուցաբերել: Շատերը նշում էին, որ կոնկրետ հացագործություններ կատարածներին, բռնաճնշումների մասնակիցներին, բնականաբար, պետք է դատապարտել, սակայն, քանի որ բոլշեվիկների մեծ մասը ստիպված խաղացել է այն ժամանակվա խաղի կանոններով ճիշտ չէ բոլորին նույն կերպ դատապարտել: *«Մենք չենք կարող արդարացնել բոլշեվիկյան բռնաճնշումները: Բայց դա շատ բարդ հարց է, մենք այսօրվա արժեքներով կարող ենք ասել դավաճան, հանցագործ: Բայց այն ժամանակ դե ֆակտո այլ խաղի կանոններ են եղել»*՝ նշում էր մեր զրուցակիցներից մեկը:

«Խանջյանը, Շահումյանը դրանք Հայաստանի մարդիկ են եւ փորձել են հնարավորինս Հայաստանը հեռու պահել ցնցումներից: Բայց ոմանք խախտել են մարդու իրավունքները, ոմանք չեն կարողացել դիմակայել ճնշումներին եւ շատերին որպես զոհեր պետք է դիտարկել»: Վերոնշյալ տեսակետը բավական տիպային է:

Ներկայացվել է նաև տեսակետ, որ տարբերակված մոտեցումը ոչ միայն անհատներին պետք է վերաբերի, այլ նաև կոնկրետ ժամանակաշրջաններին. *«բոլշևիկյան այն սերունդը, ում ձեռքով կործանվեց առաջին հանրապետությունը, նրանք պետք է դատապարտվեն: Բայց, օրինակ, յոթանասունականների կոմունիստներին ի՞նչ ասես, միայն նրանց կարելի է դատապարտել, որոնք կոնկրետ հանցանքներ են արել»:* Կամ այսպիսի նմանատիպ մոտեցում՝ *«մայիսյան ապստամբ բոլշեվիկներին ատում եմ, բայց կան այլ բոլշեվիկներ, որոնք հայրենասեր են եղել, որոնք ուզեցել են զարգացում ապահովել»:*

Հնչել է նաեւ կարծիք, որ դժվար է ասել, թե ինչպիսի վերաբերմունք պետք է արտահայտել՝ տարբերակված, թե ոչ՝ այդ հարցին պատասխանելու համար «*պետք է կոնտեքստը իմանալ*»:

Բայց մեր բոլոր զրուցակիցները նշել են, որ հարկ է պետական մակարդարկով դատապարտել բռնաճնշումներին մասնակցած հայ բոլշեվիկներին եւ որ որեւէ նպատակ, գաղափար չի կարող արդարացնել բռնաճնշումները:

Նաեւ ասվել է, որ *«բոլշեվիկներին պետք է դատապարտել որպես երեւույթ»* որ նման բաներ այլեւս չկրկնվեն:

Հետաքրքրական է, որ հետհեղափոխական իշխող քաղաքական վերնախավը ներկայացնող մեր բոլոր զրուցակիցների համար անընդունելի է խորհրդային պետական գործիչ Ա. Միկոյանի արձանի տեղադրման գաղափարը եւ դա որպես կանոն հիմնավորվում է բռնաճնշումներին այդ գործչի ուղղակի մասնակից լինելու հանգամանքով: Սակայն շատերի համար ընդունելի է, որ այլ, իրենց կարծիքով, հայրենասեր եւ բռնաճնշումների մեջ չներգրավված սովետական հայ գործիչների արձաններ լինեն, օրինակ՝ Ա. Խանջյանի, Ս. Շահումյանի, Կ. Դեմիրճյանի արձաններ եւ այլն: Նման դիրքորոշումը կարող ենք համարել որպես հայ բոլշեվիկների նկատմամբ տաբերակված մոտեցման դրսեւորում:

Մեր զրուցակիցներից մեկը նշել է, որ՝ *«Միկոյանի արձանը պետք չէ դնել պետական մակարդակով, բայց եթե հասարակական նախաձեռնություն լինի, ես, որպես պետական պաշտոնյա, չեմ կարող ասել՝ դնել, թե՞ ոչ»:*

Հնչել է նաեւ կարծիք, որ արձանը կարող է դրվել միայն որպես թանգարանի նմուշ, կամ, ասենք, սովետական շրջանին նվիրված ինչ-որ մշակութային թաղամասում՝ *«ինչ-որ մի տեղ, որը համատեքստված է իր պատմության մեջ»*: Հնչել է նաեւ տեսակետ, որ Միկոյանի արձանը կարող է տեղադրվել միայն որպես հիշեցում խորհրդային շրջանում իրականացված բռնաճնշումների եւ դրանց իրականացնողների մասին:

Ընդհանրապես այս հարցի վերաբերյալ կարծիքների մեծ մասը կտրուկ եւ միանշանակ էին. «*Միկոյանի արձան չպետք է լինի Հայաստանում, սա արժեբանական հարց է», «Միկոյանի արձանը չպետք է լինի սկբունքորեն»:*

ԽՍՀՄ ռեժիմը պետական մակարդակով դատապարտելու անհրաժեշտության վերաբերյալ ոչ միանշանակ մոտեցումներ

Իշխող քաղաքական վերնախավի ներկայացուցիչ մեր զրուցակիցները տարբեր մոտեցումներ ունեն այն հարցի վերաբերյալ, թե արդյոք պետք է պետական մակարդակով դատապարտել եւ գնահատական տալ ԽՍՀՄ քաղաքական ռեժիմին, այդ թվում, սովետական Հայաստանին:

Ահա որոշ տարածված կարծիքներ՝ *«առաջին անգամ եմ մտածում, թե պետք է արդյոք պետականորեն վերաբերմունք արտահայտել ԽՍՀՄ ռեժիմի նկատմամբ,*

պետք է մտածել այդ ուղղությամբ»: «Քաղաքական էլիտան պետք է բաց խոսի անցյալի մասին եւ մենք պետք է վերաարժեվորենք, գնահատական տանք այս ամենին, եթե մենք դա չանենք, դա երկերեսանիություն կլինի մեր կողմից»:

Սակայն նաեւ ասվում էր եւ հաճախ նրանց կողմից, որոնք կողմ էին անցյալը վերարժեվորելուն, որ *«այօրվա քաղաքական տիրույթում առաջնահերթություն չի դատապարտելը, գնահատական տալը սովետական անցյալին»:*

Մեր զրուցակիցներից մեկն ափսոսանք է հայտնել, *որ «ժամանակին կոմունիստական ռեժիմը չի դատապարտվել»:*

Նաեւ հնչել են ավելի զգուշավոր կարծիքներ, որ *«չարժե պետական մակարդակով գնահատական տալ, քանի որ դա ներքին սոցիալական եւ աշխարհաքաղաքական բնույթի խնդիրներ կարող է առաջացնել»,* որ պետք է լավ հասկանալ, թե ինչ խնդիր ենք մենք լուծում անցյալին գնահատական տալով՝ *«գնահատական տալու իմաստը հասկանանք դա ո՞րն է, ավելի լավ չէ արդյո՞ք, որ պետությունը հռչակի, որ իր համար կարեւոր է ժողովրդավարական արժեքների սերմանումը, ժողովրդավարության զարգացումը»* եւ եւս երկու նմանատիպ տեսակետ՝ *«եթե պետականորեն հայտարարենք, որ դա օկուպացիա էր եւ դատապարտենք դա, արդյո՞ք արդարությունը վերականգնվելու է»: «Եթե անցյալի գնահատականները օգնելու են այսօրվա մեր խնդիրները լուծելու համար դա կարելի է հասկանալ: Բայց նաեւ պետք է հասկանալ՝ արդյոք կա հրամայական սովետական անցյալը պետական մակարդակով գնահատելու համար»:*

Մեր զրուցակիցներից մեկն էլ այս հարցի շուրջ անհրաժեշտ զգուշավորությունը բացատրում է աշխարհաքաղաքական բնույթի վտանգներով՝ *«սովետական ռեժիմին գնահատական տալը քաղաքական կոնտեքստ ունի: Հայաստանը հռչակել է, որ արտաքին քաղաքականության առումով կտրուկ շրջադարձեր չի անելու, որ խորացնելու է հարաբերությունները Ռուսաստանի հետ եւ իշխանությունների կողմից սովետական ռեժիմը դատապարտող գործողությունը կարող է Մոսկվայում դիտվել որպես հակառուսական քայլ եւ հայաստանյան իշխանությունները, եթե նման քայլեր անեն, ապա շատ զգույշ պետք է անեն եւ ելնեն երկրի շահերից, հասկանալով, որ անզգույշ քայլեր անելու պարագայում Ռուսաստանի դիրքորոշումը կարող է վնասել մեր երկրի շահերին»:*

Այս հարցի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումների վերլուծությունը ցույց է տալիս, որ ԽՍՀՄ-ում, այդ թվում, Հայաստանում հաստատված քաղաքական ռեժիմը դատապարտելու հարցի վերաբերյալ հետհեղափոխական իշխող քաղաքական վերնախավի ներկայացուցիչների մոտեցումները տարբեր են: Դատապարտելու օգտին հանդես եկողների հետ մեկտեղ գոյություն ունեն դեմ կարծիքներ արտահայտողներ:

Ինչպես նաեւ հնչել է տեսակետ, որ դատապարտել պետք է, սակայն դա պետք է անել ճիշտ ժամանակին: Հարկ է նաեւ նշել, որ դատապարտելուն դեմ հանդես եկողները ամենեւին չեն համարում, որ ԽՍՀՄ քաղաքական ռեժիմը արժանի չէ դատապարտման, նրանք ուղղակի գտնում են, որ ինչ-ինչ պատճառներով չկա նման անհրաժեշտություն:

Փողոցների անվանափոխություն՝ տոտալիտարիզմի դատապարտման անհրաժեշտ դրսեւորումից մինչեւ ոչ օրակարգային հարց

Հետաքրքրական է այն փաստը, որ սովետական գործիչների անունները կրող փողոցների անվանափոխության վերաբերյալ նույնպես գոյություն ունի կարծիքների բազմազանություն: Թեեւ մեր բոլոր զրուցակիցները նշել են, որ իրենք դատապարտում են բռնություններ իրականացրած հայ բոլշեվիկներին եւ, հիմնականում, կտրականապես դեմ են, օրինակ, Միկոյանի արձանի տեղադրմանը, սակայն շատերը նշել են, որ փողոցների անվանափոխության գաղափարը արդիական չեն համարում, իսկ ոմանք էլ համարում են, որ այն կարող է կոնֆլիկտածին լինել եւ կոչ են անում զգուշավորություն ցուցաբերել: Ահա այդպիսի նման կարծիք՝ «*չի կարելի միանշանակ վերաբերմունք ցուցաբերել փողոցների անվանափոխության հարցին, պետք է հարցումներ անել, հասկանալ մարդկանց վերաբերմունքը, թե ինչքանով դա մարդկանց կնեղացնի:*» Մեկ այլ նմանատիպ տեսակետ՝ «*փողոցների անվանափոխության խնդրով պետք է նշել, որ ավագ սերունդը հակազդում է նման նախաձեռնություններին, նա լավ հիշողություններ ունի սովետական անցյալի հետ կապված եւ շատ դժվար է մարդկանց ասել, որ դուք խաբված եք եղել: Մի փոքր պետք է սպասել, դեռ վաղ է նման նախաձեռնություններով հանդես գալ: Մարդկանց պետք է սահուն կերպով բերել դրան, որ, օրինակ, Կասյանի անունը չպետք է լինի*»:

Բայց նաեւ հնչել են անվանափոխությանը կողմ տեսակետներ՝ «*փողոցների անվանափոխություն կարող է լինել եւ դա չի առաջացնի Ռուսաստանի փոխազդեցությունը*»: Հնչել է նմանատիպ ավելի կտրուկ կարծիք՝ «*փողոցների անվանափոխության առումով պետք է հետեւողականություն հանդես բերվի եւ «Ելք»-ի ավագանին հանդես գա այդ նախագծով: Հայաստանը հիմա ավելի ինքնիշխան երկիր է եւ այդ դեպքում Ռուսաստանի հնարավոր քննադատող վերաբերմունքը չպետք է զսպի մեզ սովետական անցյալը վերանայել, չի կարելի ինքնիշխանությունը զիճել*»:

Մեկ այլ հետաքրքրական տեսակետ, որը պաշտպանում է անվանափոխության գաղափարը, բայց դեմ է այդ անվանափոխությունը, այսպես ասած, գովազդելուն՝ «*եթե ուզում ենք փողոցներն անվանափոխել, ապա պետք է ուղղակի անել, այլ ոչ թե*

հայտարարել: Օրինակ ես չեմ կարծում, որ Վրաստանը շատ բան շահեց նրանից, որ անընդատ պրոկլամացիաներ էր անում: Մենք շահերի բախման վրա չենք արել մեր հեղափոխությունը: Այսպես, թե այնպես մենք պետք է փորձենք հաշվի առնել այն, թե ինչ ռեակցիա կարող է լինել տարբեր տեղերում: Մենք արդեն իսկ 90-ականների սկզբին տոպոնիմիկայի առումով շատ բան ենք արել»:

Պետք է նշել, որ հնչել է նաեւ տեսակետ, որը դեմ է փողոցների անվանափոխության գաղափարին ընդանրապես, այլ ոչ միայն կոնկրետ սովետական գործիչների անունները կրող փողոցների անվանափոխությանը՝ «*Փողոցների անվանափոխության գաղափարը չեմ հասկանում, մարդիկ սովորույթի ուժով շարունակում են հին անուններով կոչել փողոցները»:*

Այստեղ եւս պետք է նկատել, որ ինչպես սովետական ռեժիմը դատապարտելուն դեմ արտահայտվողների դեպքում էր, փողոցների անվանափոխությանը դեմ հանդես եկողների մոտիվացիան այն չէր, որ փողոցները չի կարելի անվանափոխել, որովհետեւ սովետական գործիչները հարգանքի արժանի են եւ այլն:

ԽՍՀՄ շրջանի քաղաքական բռնաճնշումներին նվիրված թանգարանի անհրաժեշտություն

Հարկ է նշել, որ մեր զրուցակիցների մեծ մասը կողմ էին, որ սովետական շրջանում իրականացված բռնաճնշումներին նվիրված թանգարան լինի Հայաստանում եւ իրենց այդ տեսակետը հիմնավորում էին նշելով, որ այն բռնություններ կանխարգելող դերակատարում կարող է ունենալ: *«Մենք պետք է ունենանք նոր լուծումներով հագեցած սովետական բռնաճնշումներին նվիրված թանգարան, դա շատ լավ քավարան կարող է լինել կոմունիստական գործիչների համար եւ նաեւ շատ ուսուցողական նոր սերնդի համար»: «Թանգարան ստեղծելու տակ լուրջ հետազոտություններ են, դա ակադեմիական միջավայր պետք է լինի: Ուսուցողական նպատակ կարող է ունենալ, որ այլեւս չկրկնվեն նման բաներ»*՝ նշում էր մեր զրուցակիցներից մեկը:

Հնչեց նաեւ տեսակետ, որ նմանատիպ թանգարան կարող է լինել օրինակ «ԿԳԲ-ի շենքում»: «Նախկին ԿԳԲ-ի շենքի մի մասում դա կարող է լինել, որպեսզի ցույց տանք, թե ի՞նչ է եղել եւ որ չի կարելի թույլ տալ դրա կրկնությունը»: Ներկայացվել է նաեւ կարծիք, որ նման թանգարանը կարող է նաեւ գիտական կենտրոն հանդիսանալ:

Սակայն մեր զրուցակիցներից մեկը որոշակի զգուշավորությամբ է վերաբերվում թանգարան ստեղծելու գաղափարին՝ «*գտնվելով այս դիրքում, հաշվի առնելով աշխարհաքաղաքական մի քանի գործոններ ես կարող եմ ասել, որ կարող է*

դժվարություններ ստեղծվել ԽՍՀՄ բռնաճնշումների վերաբերյալ թանգարան, հուշահամալիր ստեղծելու առումով»: Կարող ենք ենթադրել, որ այս տեսակետի հիմքում ընկած է այն մտահոգությունը, որ Ռուսաստանը, որը վերջին շրջանում շատ զգայուն է սովետական անցյալի թեմայի նկատմամբ, կարող է վատ ընդունել այդ գաղափարը եւ, հնարավոր է, որ Հայաստանը ստիպված լինի հաշվի նստել այդ իրողության հետ:

Նյութական տեսանկյունից՝ դրական, իսկ իրավական մշակույթի առումով՝ բացասական ազդեցություն

Ինչպիսի՞ ազդեցություն է ունեցել ԽՍՀՄ-ը Հայաստանի ժողովրդի վրա, արդյո՞ք կարող ենք գնահատել՝ ավելի շատ դրական, թե բացասական է եղել այդ ազդեցությունը: Այս հարցերի շուրջ մեր զրուցակիցների կողմից ներկայացված տեսակետները նույնպես տարբեր էին, սակայն մեկ հարցում կար կոնսենսուս, որ ստալինյան շրջանը միանշանակ բացասական ազդեցություն է ունեցել: Այլ շրջանների ազդեցության հետ կապված գերիշխող տեսակետն այն էր, որ կա եւ դրական եւ բացասական ժառանգություն:

Նշենք այս հարցի շուրջ ներկայացված մի քանի տեսակետ՝ *«երկրի ինֆրաստրուկտուրան զարգացել է հենց սովետական Հայաստանում... Մենք չպետք է մոռանանք ոչ լավը, ոչ վատը»: «Համ լավ բան կա ԽՍՀՄ-ի մեջ (աղքատության հաղթահարում, համընդհանուր գրագիտություն), համ վատ (բռնություններ, ավտորիտար կառավարում): Եվ այդ հարցը քննարկման հարց է, ցավոտ հարց է, իհարկե»:* Նման մեկ այլ տեսակետ եւս՝ *«մի կողմից, սովետական շրջանը նյութական տեսակետից եւ այլ դրական ազդեցություն է թողել, բայց ճակատագրեր են խեղվել, արատավոր բարքեր են ձեւավորվել հումանիտար առումով այլասերում է բերել»:*

Հնչել է նաեւ ավելի խիստ կարծիք, ըստ որի՝ սովետական անցյալը մեծամասամբ բացասական ազդեցություն է ունեցել Հայաստանի ժողովրդի վրա: Բայց եղել է նաեւ սրանք հակառակ մոտեցում:

Մեր զրուցակիցներից մեկն էլ նշել է, որ ճիշտ կլինի դեռ խոսել դրական ազդեցության մասին, ակնարկելով, որ բացասական ազդեցության մասին խոսելով կարող են սովետական շրջանի մադկանց ընկճել, քանի որ կպարզվի, որ իրենք ստի մեջ են ապրել՝ *«սովետական Հայաստանը մեր պատմության մի մասն է: Դեռ շուտ է վատերին անդրադառնալ, կարելի է լավ կողմերը վերհանել: Դեռ ժամանակ է պետք որպեսզի ավելի սթափ գնահատենք անցյալը»:*

Սակայն «թայմինգի» առումով զրուցակիցներից մեկը լրիվ հակառակ կարծիքի է՝ *«Մենք ունենք ռեպրեսիաների զոհերի օր, ռեպրեսիաներին նվիրված հուշարձան: Մենք պետք է այս ամենի մասին խոսենք»:*

Հնչել են նաեւ բավական կոշտ տեսակետներ սովետական անցյալի եւ նրա ազդեցության մասին, օրինակ՝ *«իմ համար սովետական անցյալը կորսված ժամանակ էր... Ճիշտ չեմ համարում, երբ ասում են ցեխից պետություն են սարքել, եթե թողնեին մենք կզարգանայինք եւ մի քանի անգամ ավելի շատ զարգացած կլինեինք, առաջին հանարապետությունում լուրջ հիմքեր էին դրված զարգացած, ժողովրդավարական երկիր դառնալու համար:*

Սովետական պատմության վերանայման անհրաժեշտությունը

Հարկ է նշել, որ մեր զրուցակիցների մեծ մասը կողմ է սովետական շրջանի պատմության վերանայմանը: Շատերի կողմից խոսվում էր նաեւ պատմության դասագրքերի վերանայման անհրաժեշտության մասին: Ի պաշտպանություն այդ գաղափարների հաճախ ներկայացվում էին այսպիսի փաստարկներ՝ *«Նորագույն պատմությունը ավելի է ազդում մեր կյանքի վրա, քան այլ ժամանակաշրջանների պատմությունը»: «Քաղաքական էլիտան պետք է բաց խոսի անցյալի մասին եւ մենք պետք է վերաարժեվորենք, գնահատական տանք այս ամենին»:*

Մեր զրուցակիներից մեկն էլ խոսեց պատմության վերանայման անխուսափելիության մասին, բայց եւ նկատեց, որ պետք է դա *«շատ զգույշ անել»:*

Նաեւ նշվում էր, որ առաջնային է պատմության ուսումնասիրության մեթոդի վերանայումը՝ *«պետությունը պետք է սովորեցնի, թե ինչպես պետք է պատմության ուսումնասիրության մեթոդաբանությունը վերանայել: Գիտական մեթոդի կիրառմամբ հետազոտությունների իրականացմանը պետք է նպաստել եւ հասցնել կողմնակալության չափաբաժնի հնարավորինս իջեցմանը»:*

Հաճախ էր ասվում, որ մենք պետք է ոչ այնքան դեպի անցյալը նայենք, այլ ավելի շատ դեպի առաջ՝ *«սովետական անցյալի հետ կապված մեր կրթական քաղաքականությունը պետք է հիմնված լինի ժողովրդվարության հաստատման գաղափարի վրա, այլ ոչ թե սովետական անցյալի գնահատման եւ ես գտնում եմ, որ ազատություն պետք է տալ ակադեմիական, կրթական շրջանակներին եւ բնական կարգավորման միջոցով որակը կբարձրանա»:*

Հնչել է նաեւ տեսակետ, որ ի տարբերություն սովետական անցյալի դատապարտման, գիտական մակարդակով պատմության վերանայումը չի առաջացնի աշխարհաքաղաքական բնույթի խնդիր՝ *«դասագրքերի վերանայումը,*

կոնֆերանսները, ցուցահանդեսները մեծ արձագանք չեն գտնի Ռուսաստանում, այլ բան, եթե պետական մակարդակով սովետական անցյալը դատապարտող օրենք ընդունվի, դա արդեն այլ, շատ խիստ արձագանք կգտնի Ռուսաստանում:

Միջազգային կազմակերպությունների տոտալիտարիզմը դատապարտող բանաձեւերի ոչ միանշանակ ընկալումները

Հետաքրքրական է, որ զրուցակիցների բացարձակ մեծամասնությունը ծանոթ չի եղել սովետական, հատկապես ստալինյան ռեժիմը դատապարտող եւ վերջինս ֆաշիստական ռեժիմին հավասարեցնող մի շարք եվրոպական կառույցների կողմից ընդունված բանաձեւերի մանրամասներին: Տեղեկանալով դրանց մասին մեր զրուցակիցների մի մասը հայտնել է, որ պետական մակարդակով պետք է միանալ նման նախաձեռնություններին, քանի որ շատ կարեւոր է դա անել բարոյականության տեսակետից: Մեր զրուցակիցների մյուս մասը տեսակետ է հայտնել, որ պետք չէ միանալ նման բանաձեւերին, հիմնականում, պատճառաբանելով այդ դիրքորոշումը աշխարհաքաղաքական բնույթի հնարավոր անցանկալի հետեւանքներով:

Ահա մի քանի «կողմ» կարծիքներ՝ «*Հիտլերն էլ, Ստալինն էլ երկուսն էլ մարդակեր են... պետք է դատապարենք, մենք բարոյական իրավունք չունենք չդատապարտել ռեպրեսիաները, օրինակ հենց Ստալինն էր մեղավորը, որ ունենք ղարաբաղյան կոնֆլիկտ», «Երկու ռեժիմներն էլ՝ ֆաշիստական Գերմանիան եւ ստալինյան ԽՍՀՄ-ը հակամարդկային են», «Ստալինյան եւ հիտլերյան ռեժիմները հավասարեցնող բանաձեւերին միանալը եթե անելու ենք եվրոպացիներին հաճոյանալու համար, ապա պետք չէ դա անել, բայց եթե արդարության համար, ապա այո, պետք է: Եվ դա պետք է անել նույնիսկ այն պարագայում եթե դա առաջացնի Ռուսաստանի հնարավոր դժգոհությունը»: Մեկ այլ միանշանակ կողմ կարծիք՝ «եթե ուզում ենք աշխարհին համահունչ քայլել, պետք է դատապարտենք, եթե ուզում ենք մնալ մեր ծակում, մտածենք, որ ռուսներին չնեղացնենք, դա ուրիշ բան»:*

Ներկայացնենք նաեւ մի քանի տիպային «դեմ» կարծիքներ՝ «*պետք է հասկանալ, թե ի՞նչ է տալու մեզ միջազգային կառույցների կողմից ստալինյան եւ հիտլերյան ռեժիմները դատապարոտող եւ դրանց միջեւ հավասարեցնող նշան դնող բանաձեւերին միանալը: Մենք պետք է զգույշ լինենք, պետք է հասկանալ՝ արդյո՞ք անցյալը փորփրելը մեզ ավելի խորը խնդիրների մեջ չի մտցնում: Ամեն մի բառ դիվանագիտության ասպարեզում լուրջ ազդեցություն է ունենում մեր կյանքի վրա»: «Աշխարհաքաղաքական նկատառումներից ելնելով պետք չէ պետական մակարադակով վերաբերմունք հայտնել»:*

Հարկ է նշել, որ մեր զրուցակիցների մեծ մասը համարում է, որ հիտլերյան եւ ստալինյան ռեժիմները իսկապես նման են իրար, քանի որ երկուսն էլ մարդկության դեմ հանցանքներ են գործել եւ վերահսկել են մարդկանց կյանքի բոլոր ոլորտները:

Մեր զրուցակիցները նաեւ հատկապես կարեւորում էին այն, որ Հայաստանի սովետական անցյալի, ԽՍՀՄ տոտալիտար ռեժիմի հետազոտությունների իրականացմամբ զբաղվեն հայաստանյան ակադեմիական շրջանակները, իսկ պետությունը, ավելի ճիշտ կլինի, որ սատարի նման նախաձեռնություններին:

Հին ու նոր վերնախավերի մոտեցումների միջեվ նմանությունները եվ տարբերությունները

Համեմատական վերլուծության ենթարկելով մինչհեղափոխական եւ հետհեղափոխական իշխող քաղաքական վերնախավերի շրջանում տարածված մոտեցումները կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի սովետական շրջանի, հայ բոլշեվիկների վերաբերյալ մինչհեղափոխական եւ հետհեղափոխական, տրազիտային շրջանի իշխող քաղական վերնախավերում առկա մոտեցումները շատ առումներով էապես տարբերվում են միմյանցից:

Եթե ՀՀԿ-ական վերնախավերը դեմ էին սովետական շրջանի պատմության վերանայմանը եւ հակադրվում էին հայ սովետական գործիչների հասցեին հնչող քննադատությանը՝ համարելով նրանց հարգանքի արժանի գործիչներ, որոնց անուններով պետք է լինեն փողոցներ եւ հուշարձաններ, ապա Նիկոլ Փաշինյանի գլխավորած քաղաքական թիմի ներկայացուցիչները կողմ են պատմության վերանայմանը եւ սովետական Հայաստանի, հատկապես ստալինյան շրջանի մի շարք հայ բոլշեվիկների նկատմամբ ունեն քննդատական եւ դատապարտող վերաբերմունք:

Մինչհեղափոխական վերնախավերի շրջանում տարածված մոտեցում էր, որ սովետական անցյալի նկատմամբ քննադատական վերաբերումնքը եւ դրա հիման վրա իրականացվող նախաձեռնութունները (օրինակ՝ փողոցների անվանափոխության նախաձեռնությունը) դրանք հակառուսական քայլեր են եւ հարվածում են ռուս-հայկական բարեկամական հարաբերություններին: Մինչդեռ հետհեղափոխական իշխող քաղաքական վերնախավի ներկայացուցիչների մոտ տարածված տեսակետ է, որ ԽՍՀՄ քաղաքական ռեժիմի կողմից իրականացված բռնությունների, հակահիրվական գործունեության դատապարտումը՝ բարոյականության,

արժեքաբանության, արդարության հետ կապված խնդիր է: Ըստ նրանց բռնությունները չդատապարտելը կնշանակի ինքնիշխանության զիճում:

Հարկ է նկատել, որ այնուամենայնիվ երկու վերնախավերի մոտեցումներում կան նաեւ որոշակի նմանություններ: Երկուսն էլ սովետական անցյալը համարում են մեր պատմության օրգանական մասը եւ գտնում են, որ Հայաստանի սովետական շրջանում եղել են եւ լավ եւ վատ երեւույթներ: Օրինակ, որպես դրական եւրեւույթներ նշվել են՝ գիտության եւ կրթության, մշակույթի զարգացումը, ինդուստրիալիզացիան, սոցիալ-տնտեսական առաջընթացը: Կոնսենսուս կա նաեւ այն հարցում, որ Հայաստանում սովետական կարգերի հաստատումը աշխարհաքաղաքական զարգացումների հետեւանք էր: Սակայն կարող ենք նշել, որ նույնիսկ վերոնշյալ հարցերի հետ կապված նոր վերնախավի ներկայացուցիչներից ոմանց դիրքորոշումներում առկա են հին վերնախավի մոտեցումներից տարբերվող տարրեր:

Հետհեղափոխական շրջանի իշխող քաղաքական վերնախավի որոշ ներկայացուցիչներ գտնում են, որ ԽՍՀՄ շրջանը դա կորսված տարիներ էին եւ տարբեր ոլոտներում տեղի ունեցած զարգացումը ավելին կլիներ, եթե չլիներ բռնապետական Սովետական միությունը: Նրանցից ոմանք նաեւ գտնում են, որ սովետական կարգերի հաստատումը անխուսափելի չէր՝ ուղղակի հայերը *«ճիշտ չկողմնորոշվեցին»:*

ՎԵՐՋԱԲԱՆ

Մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ տրանզիտային շրջանի իշխող քաղաքական վերնախավի մոտեցումները, ի տարբերություն մինչհեղափոխական շրջանի իշխող քաղաքական վերնախավի մոտեցումների, համահունչուն են պատմության ռեվիզիոնիստական դպրոցի այն գաղափարախոսությանը, որ՝ գոյություն չունի անցյալի իրադարձությունների եւ դրանց նշանակության միակ, հավերժ եւ անփոփոխ «ճշմարտություն» եւ որ պատմությունը ենթակա է վերանայման նոր փաստերի առաջացման, ժամանակի հետ մեկտեղ առաջացող անցյալի ավելի լավ ընկալման եւ այլնի պատճառով:

Հարկ է նշել նաեւ, որ հետհեղափոխական շրջանի իշխող քաղաքական վերնախավի մոտեցումները մեծամասամբ համընկնում են տոտալիտար համակարգերը դատապարտող եվրոպական կառույցների եւ շատ փորձագետների այն

տեսակետին, որ ինչպես ստալինյան, այնպես էլ հիտլերյան ռեժիմները մարդկության դեմ հանցանքներ գործած տոտալիտար համակարգեր են: Սակայն հետհեղափոխական շրջանի հայաստանյան իշխող քաղաքական վերնախավի ներկայացուցիչներից շատերը դեմ են պետական մակարդակով ԽՍՀՄ-ը դատապարտելուն, թեեւ կողմ են որպեսզի ԽՍՀՄ բռնաճնշումներին նվիրված թանգարաններ լինեն, ինչպիսիք կան բազմաթիվ հետսոցիալիստական երկրներում:

Խորհրդային անցյալը դատապարտելու խնդրին առնչվող հետհեղափոխան տրանզիտային շրջանի իշխող քաղաքական վերնախավի մոտեցումները որոշակիորեն տարբերվում են, օրինակ, Արեւելյան եվրոպայի մի շարք երկրներում առկա մոտեցումներից: Հիմնական տարբերությունն այն է, որ հայաստանյան վերնախավի շրջանում չկա շատ արեւելաեվրոպական երկրների վերնախավերին բնորոշ այն կտրուկ մոտեցումը, որ անհրաժեշտ է վերացնել խորհրդային ռեժիմի ժառանգության հետ կապված յուրաքանչյուր բան: Հայաստանյան իշխանությունների մոտ, ի տարբերություն շատ արեւելաեվրոպական պետությունների իշխող քաղաքական վերնախավերի, առկա է ԽՍՀՄ շրջանում նաեւ դրական երեւույթներ տեսնելու միտումը:

Առաջարկություններ

- Հատկապես հաշվի առնելով «թավշյա հեղափոխության» ոչ բռնի բնույթը եւ նրա դեմոկրատական ուղղվածությունը տրամաբանված եւ արդարացված կլինի, եթե Հայաստանի իշխող քաղաքական նոր վերնախավը դատապարտի Հայաստանի սովետական շրջանի ժամանակ իրականացված բռնաճնշումները եւ քաղաքական հալածանքները, ինչպես նաեւ հարկ եղած դեպքում պաշտոնապես հավանություն տա միջազգային կառույցների կողմից ընդունված այն փաստաթղթերին, որոնցով դատապարտվում են ԽՍՀՄ-ում տեղի ունեցած զանգվածային քաղաքական բռնաճնշումները:
- Դատապարտման քաղաքականությունը հանրայնացնելու արդյունավետ միջոցներից մեկը կարող է լինել խորհրդային շրջանի բռնաճնշումների թեմային անդրադարձող հաղորդումների, ֆիլմերի թողարկումը, հատկապես, Հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության կողմից:

- Կրթության եւ գիտության նախարարության շրջանակներում առաջարկվում է ստեղծել պատմության վերանայման մեթոդոլոգիայի ձեւավորման խնդիրներով զբաղվող աշխատանքային խումբ, որի կողմից ներկայացված առաջարկները կարող են ուղեցույց լինել պատմություն դասավանդողների, պատմության դասագրքեր գրողների համար՝ սովետական ժամանակաշրջանի Հայաստանի պատմությունը առավել անկողմնակալ, վերջին շրջանում հայտնաբերված բոլոր փաստերը արտացոլող եւ հումանիստական արժեքներին համահունչ դարձնելու համար:
- Առաջարկվում է պետական մակարդակով ողջունել եւ հնարավորինս աջակցել բոլոր այն նախաձեռնություններին, որոնք ուղղված կլինեն սովետական անցյալի վերարժեվորմանը, բռնաճնշումների դատապարտմանն ու դրանց հիշատակմանը:
- Անցումային ժամանաշրջանի առաջնահերթ խնդիրները լուծելուց հետո արդարացի կլինի, եթե ՀՀ իշխող քաղաքական վերնախավը գնահատական տա ԽՍՀՄ քաղաքական ռեժիմին՝ նշելով վերջինիս հակադեմոկրատական բնույթը եւ դատապարտելով ԽՍՀՄ ժամանակաշրջանում իրականացված բռնաճնշումները:
- Պետական մակարդակով հարկ է աջակցել Հայաստանի սովետական շրջանի քաղաքական պատմությանն անկողմնակալ կերպով անդրադարձող գիտաժողովների անցկացմանը, ֆիլմերի եւ հեռուստա-ռադիոհաղորդումների արտադրությանը, գրքերի հրապարակմանը եւ թեմային առնչվող այլ գիտական եւ մշակութային միջոցառումների անցկացմանը:
- Այդ թվում մասնավոր կապիտալի ներգրավման միջոցով նպատակահարմար կլինի ստեղծել Սովետական Հայաստանին վերաբերող, ժամանակակից տեխնոլոգիական լուծումներով հագեցած թանգարան: Այդ թանգարանը մանրամասն կներկայացնի Հայաստանի սովետական շրջանի հասարակական, մշակութային եւ քաղաքական կյանքը՝ շեշտադրելով մարդու իրավունքները ոտնահարող այն քաղաքական պրակտիկաները, որոնք առկա են եղել սովետական Հայաստանի տարբեր շրջաններում: Եթե լինի նման թանգարան ստեղծելու մասնավոր նախաձեռնություն, ապա հարկ է հնարավորինս աջակցել դրա ստեղծմանը եւ հետագա աշխատանքներին: Այդպիսի թանգարանը կարող է լինել սովետական շրջանի քաղաքական

պատմության ուսումնասիրման գիտական կենտրոն, ինչպես նաեւ դեմոկրատական արժեքներ տարածող ու ավտորիտար քաղաքական մշակույթը քննադատող կրթական օջախ:

- Լիովին արդարացված կլինի այնպիսի թանգարանների, հուշահամալիների եւ այլնի ստեղծման արգելումը, որոնցով կգովերգվի, կռոմանտիզացվի որեւէ տոտալիտար ռեժիմ:
- Չաջակցել բոլոր այն նախաձեռնություններին, որոնք խնդիր կունենան միայն դրական լույսի ներքո ներկայացնել սովետական շրջանը եւ կշրջանցեն սովետական ռեժիմի կողմից իրականացված բռնաճնշումների եւ քաղաքական հալածանքների թեման:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Фурье Ф. Прошлое одной иллюзии. «Ad Marginem» М. С. 189
[2] Резолюция ПА ОБСЕ «Воссоединение разделенной Европы, https://www.svoboda.org/a/1768840.html,
[3] Abashin S. Soviet past and memory policy in the countries of Central Asia. Berlin. P. 303
[4] Гражданское образование и демократизация в странах восточного партнерства. ФЦГО, Бонн. С. 32
[5] Польша одобрила декоммунизацию названий и удаление советских символов с Памятников, https://www.currenttime.tv/a/28572962.html, 22.06.2017
[6] Финкель.Е. В поисках потерянных геноцидов. Pro et Contra, Май—август 2011. http://carnegieendowment.org/files/ProetContra_52_123-143.pdf
[7] Захарова: полякам грозит учиться по книгам об инопланетянах-освободителях, https://ria.ru/world/20170504/1493680026.html04.05.2017, 04.05.2017
[8] Քաղաքական գործիչներն արձագանքում են բոլշեվիկյան բռնաճնշումների զոհերին նվիրված ցուցահանդեսի փակմանը, https://www.azatutyun.am/a/28731660.html, 12.09.2017
[9] «Հիմնաքար», Ararat TV, 06.09.17
[10] Նույն տեղը
[11] Նույն տեղը
[12] Նույն տեղը
[13] https://www.azatutyun.am/a/28727055.html
[14] Տեսակետների խաչմերուկ, https://www.azatutyun.am/a/28729507.html, 11.09.17
[15] «Հետհաշվարկ», Արարատ ՀԸ, 08.09.17
[16] Повестка Миллса? Голос Армении, 2017-09-04
[17] Не стоит плевать в прошлое, Голос Армении, 2017-09-08
[18] «Ուրվագիծ», Կենտրոն ՀԸ, 07.09.17
[19] «Հայորդիներ», Արարատ ՀԸ, 12.09.17
[20] Տեսակետների խաչմերուկ, https://www.azatutyun.am/a/28729507.html, 11.09.17
[21] Տաճատ Սարգսյանը Ելքին՝ ելք կա, http://www.aravot.am/2017/08/28/904323/, 28. 08.2017
[22] «Հայկական ուրբաթ», Կենտրոն ՀԸ, 01.09.17
[23] Նույն տեղը
[24] Լենինգրադյան փողոցի վերանվանման հիմնավորումն Աշոտյանի համար «վիրավորական է», https://www.azatutyun.am/a/28712512.html, 02.09.2017
[25] Դավիթ Հարությունյանը հայտարարեց՝ ստալինյան բռնաճնշումների ցուցահանդեսին լայն տարածում են տալու եւ դրանով կանգ չեն առնելու, http://www.aravot.am/2017/09/13/907404/, 13.09.17